

391.85
Q-30

19 NOV 2010

891.85-3
Ո-37

Բ



891.85

0-30

191

ՀԻՔԱ-ՕՐՃԻՇԿՈ



ԳԻՒՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԸ



ՌՈՒՍՆԵՐԵՆԻՑ
ՅՈՎՀ. ՄԵԳՆԻԿԵԱՆ



ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՏԳԱՐԱՆ Յ. Ի. ԼԵՆԻՆՍԿԻ
1896

1002
1439

1002
1439

ԳԻՐՂԱԿԱՆ ՓԵՍՏԱՐԱՆԵՐ

Ա.

Дозволено цензурою, С.-Петербургъ, 2 Ноября 1895 г.

Գարնանային երեկոյ էր: Տերկուած դաշտերը շնչում էին գութանով նոր շուռ տուած հողի բուրմունքով: Երկինքը մռայլոտ էր, օդը մառախլապատ: Ծառատունկ ճանապարհով անցնում էր մի ոտաբոբիկ կին, որի բոբիկ ոտքերի տակից շթի էր տալիս գարնանային ցեխը: Նա գնում էր ծանրաքայլ և ոտքերը, ինչպէս երևում էր, ծանօթ էին այն գետնին, որի վրայով քայլում էր: Նրա համար միւսնոյն էր թէ ի՞նչ կար իւր շուրջը և ինչի՞ էր գնում ինքը, միայն թէ հասնէր մտքում դրած նպատակին: Նա ոչնչից չէր վախենում, ոչ մթից, ոչ երեկոյեան լուսթիւնից, ոչ տանձենիներից ու սոսիներից, որոնք ուրուականների պէս սեւին էին տալիս ճանապարհի վրա... Նա հանդարտ գնում էր իրեն համար...

Ճանապարհի գլխին նա նկատեց երկու փայլուն կետեր. դրանք երեւի մօտակայ ագարակի շէնութիւնների պատուհաններիցն էին: Անասունների

բակի և պարտեզի մէջ տեղ արդէն երեւում էր վան-
դակապատ դուռը. դա բացւում էր մի կողմի վրա,
ինչպէս սովորաբար լինում են այդպիսի բակերի
դռները:

Հէնց այդ բոպէին դուռը ճռճռաց և ուղղա-
ձիգ ծայրով խրուեց ցեխի մէջ, այնպէս որ դուռս
եկողը պէտք է մի ծայրը բարձրացնէր, որ կարո-
ղանար բաց անել:

Սակայն, ինչպէս երեւում էր, դուռը ծանր էր,
որովհետեւ լսւում էր նրա ուժգին ճռճռոցը և մի
տղամարդու հայհոյանք.

— Այ, սատանի բաժին լինե՛ս դու...

Մի մարդ՝ ծանր բեռը ուսին, ինչպէս լինի
դուրս եկաւ դռան նեղ բացուածքից և դիմեց դէպի
մօտեցող կինը:

— Խրիստինա՛... այդ դ՞ու ես.

— Ես եմ. պատասխանեց կինը կանգ առնելով.

— Այդ ո՞ւր այդպէս դիշերով:

— Կառավարչի մօտ...

Խօսակիցները կանգնած էին ճանապարհի եր-
կու հակառակ կողմերում:

— Այդ քո բաժինդ է, — հարցրեց Խրիստինան,
զլնով ցոյց տալով նրա կռացած ուսի պարկը:

— Այո՛... բաժինս է... մի չեմ վերիկ հաճար է
և մէկ էլ անցած ամսուանից աւելացածը... Հա-
ճարն էլ խառն է տուել... Աստուած առնէ նրա
հոգին.

— Այդ ո՞վ է տուել, չլինե՞ Վիշինսկու կինը...

— Ի հարկէ նա, անաստուածը... եթէ Վիշին-

սկին լինէր, հօ դարմանախառն չէր լինի... կինը
վաղեց՝ փչացածը, տուր — ասում է — տոպրակդ. վեր-
ցրեց ու ածեց կէսը հաճար, կէսն էլ դարման...
Տէ՛ր Աստուած, Դու տաս նրան այս դարմանի
չափով հիւանդութիւն:

Որքան գիւղացին շարունակում էր խօսել,
Խրիստինան այնքան աւելի էր մօտենում նրան և
դիտում դէմքը...

— Ա՛խ, Վան՛կա Վան՛կա, — արտասանեց նա —
որ նա դիշեր ցերեկ էլ անդադար դարման ածելու
լինէր քո տոպրակդ, էլ լի այնքան չէր ածի, որքան
ես նրա պատճառով արտասուք եմ թափել աչ-
քերիցս... Նրա պատճառով ես աչքերիս լոյսը կըտ-
րել եմ շատ արտասուելուց իմ և որդիներիս համար,
աղթել եմ Աստուծուն դիշեր-ցերեկ, որ պատժէ
նրան ինձ հասցրած զրկանքի փոխարէն, չպատժեց...
Նա յաղթանակում է և ծաղրում ինձ...

Խրիստինան կանգնած էր Իվանի դիմաց, որը
մի տեսակ զղուանքով շարժում էր գլուխը...

— Էլ ո՞ւր ես գլուխդ կոխում այնտեղ. — ասաց
նա, փոխելով բեռը մի ուսից միւսը, — տեսնե՞լ ես
ուղում, ի՞նչ է, մի բան, որ երիտասարդ ժամանա-
կրդ դուրս է արել քեզ, էլ հիմա ո՞ւր ես գնում...
աւելի լաւ կլինէր, որ տեղեցդ չշարժուէիր և խրճի-
թիդ վառարանի վրա այժմ քնած լինէիր...

— Ժիշտ է, դուրս է արել, դրան խօսք չունեմ,
— ասաց նա, ձեռքը դնելով ծնոտին, — բայց ինչե՞
էր այն ժամանակ նա դուրս անում և այն խնամա-
խօսներին, որոնք զալիս էին ինձ նշանելու... եթէ

չէր սիրում, թող խնամախօսներին էլ դուրս չ'անէր:
Այդ խօսքերը նա արտասանեց վերաւորուած
ձայնով:

—Նա ինքն էր հօ ասողը,—շարունակում էր
Խրիստինան,—սպասիր Խրիստինա, հէնց որ կա-
ռավարիչ դառնամ, իսկոյն կ'ամուսնանամ քեզ
հետ... էլ ինչե՞ էր ասում այդ խօսքերը... և ահա
մինչև հիմա էլ ես կարօտ մնացի թագն ու պսակի...
Իվանը անհամբերութեամբ փոխեց բեռը միւս
ուսը:

—Դէ՛, արի՛ հիմա, բան գտաւ իրեն համար,
ջահելութիւնն է յիշում... համարեա ակամայից
արտասանեց նա:

—Ո՛չ ոք չ'օգնեց ինձ խղճուկիս, մենակ եմ
կառավարել տունս,—շարունակում էր նա,—ո՛չ ոք
իմ երեխաներիս չպահեց, չսղծաց նրանց... մենակ
եմ ապրել, մենակ աշխատել, մենակ եմ տարել իմ
վիշտս, ձեռքերիս կաշին մաշկել եմ, ոտաբոբիկ եմ
ման եկել, գիշերները անքուն եմ անցրել... և այդ
բոլորը զաւակներիս համար:

Դէ՛, բայց արեց խօսքի տոպրակը—մըթմըր-
թաց Իվանը, ամենից լաւ կլինէր, որ դու տուն
դառնայիր...

—Ձեմ կարող վերադառնալ, չեմ ես պէտքէ
գնամ Վիշինսկու մօտ, ոտքերը ընկնեմ, որ ազա-
տէ իմ Ֆիլիպիս:

—Աս... բացականչեց Իվանը, միայն հիմա կար-
ծես հասկանալով, թէ ինչե՛ է նա գնում տնտեսի մօտ.

—Նա ինձնից խելօք է, կարելի է կխղճայ իւր

զաւակին, դուցէ մի բան խորհուրդ կտայ, կ'օգնէ,
կփրկէ...

—Դէ՛, դէ՛, դնա Տէր ընդ քեզ:

—Մնաս բարով...

Եւ նրանք բաժանուեցին: Ամեն մէկը գնաց
իւր ճանապարհը: Բայց, ինչպէս երևում է, նրանք
իրարու մօտ էին ապրում, որովհետև Իվանը, մի
քանի քայլ գնալուց յետոյ, դարձաւ և հարցրեց.

—Շո՞ւտ ես դառնալու տուն.

—Իսկոյն,—պատասխանեց Խրիստինան... դի-
շերը հօ այնտեղ չեմ քնելու...

Խրիստինան Իվանի անցած կիսաբաց դռան
արանքով մտաւ ագարակի մութ ու աղտոտ բակը:
Դրա մէջտեղում երևում էին մի քանի ծառեր և
թփեր, որոնց վրա ընկնում էր փոքրիկ տան եր-
կու պատուհանների լոյսը.

Խրիստինան թագնուեց ծառերից մէկի ստուե-
րի տակ: Մի փոքրից պատշգամբ դուրս եկաւ մի
զլխաբաց, միջահասակ մարդ: Դանդաղ քայլերով
իջնելով պատշգամբից՝ նա անցաւ փոքր ինչ առած:
Այդ միջոցին թփերի խորքից մի կանացի ձայն
տուեց նրա անունը:

Վիշինսկին բարացած մնաց տեղը. լարուած
ուշադրութեամբ նա նայում էր դէպի խաւարը.
Խրիստինան յառաջ եկաւ: Նրա բոբիկ ոտքերը կո-
րած էին ցելսի մէջ, իսկ բարակ ու բարձր իրա-
նը և շալով փաթաթուած գլուխը այնքան խո-
նարհուեցան գլուխ տալու ժամանակ, որ անկա-
րելի էր դէմքը տեսնել: Բայց, ինչպէս երևում էր,

կառավարչին լաւ ծանօթ էր այդ տեսիլը, որովհետեւ նա խուլ ձայնով շնչաց.

— Էլի՛ եկել է... մի՛ անցիր լուսի առաջ... մտի՛ր, մտի՛ր թփերի մէջ և այնպէս ասա՛, ի՞նչ ես ուզում... եթէ ոչ կանայք կտեսնեն և այն ժամանակ երկուսս էլ ձեռքներից չենք պրծնի...

Գեղջկուհին թաղնուեցաւ թփերի մէջ, որտեղից շուտով լսուեց նրա խուլ շնչիւնը.

— Թանկագինս... սիրելիս... Հարազատս... խղճա՛ ինձ՝ թշուառ որբիս, օգնի՛ր, աղատի՛ր... Ֆիլիպիս...

Վիշինսկին շուտ-շուտ նայում էր իւր շուրջը և դիտում տան պատուհանները։ Լսելով իրեն ծանօթ ձայնը, նա վայր թողեց թաշկինակը բռնած ձեռքը, որով սրբում էր երեսը, հառաչեց և հանդարտ հարցրեց.

— Ուրեմն, վերցրի՞ն զինուոր... Հա՛, ասենք դու սրանից երեք ամիս առաջ արգէն ասում էիր ինձ... դէ՛ ի՞նչ անենք, տարան-տարան... նրա պէսներն են զինուոր զնացողները... իշխաններն ու կոմսերն են ծառայում թաղաւորին, նա որ ծառայի, ի՞նչ կլինի... ես ոչինչ չեմ կարող խորհուրդ տալ... դուր տեղը միայն ինձ էլ, քեզ էլ անհանգիստ ես անում։ Եթե խորում թրեւ զալն ինչ է, լաւ կ'անէիր, որ տանդ նստէիր... է՛, ապրուստդ ո՞նց է... հը՛, ի՞նչպէս է, Վան՝կէն հօ Մատվէից լա՛ւ է. ինքզ էլ հօ տեսնում ես, որ ես քո բարին եմ ցանկանում... Հէնց որ իմացայ, թէ Մատվէյը նեղացնում է ձեզ, իսկոյն Իվանին ուղարկեցի նրա տեղը և քեզ հա-

մար Հիմա երեւի լաւ կլինի... Հացդ բաւականանում է... Թէպէտ Անտօնը Վան՝կից փոքր է և նրանից աւելի թոյլ, բայց բաժինը նրա հաւասար է ստանում։

Այդ ասելով, Վիշինսկին սրբեց թաշկինակով երեսն ու ճակատը։ Խրիստինան առանց ձայն հանելու լսեց նրա խօսքերը, բայց փոխանակ պատասխանելու նրա վերջին հարցերին, դարձեալ իւրը շարունակեց.

— Գիտեմ, որ մենակ նրա պէսները չեն զինուոր զնացողները և թաղաւորին ծառայողները... նրանք հէնց դրա համար էլ ծնւում են, որ ծառայեն... Ես արգէն այնքան լաց եմ եղել, որ արասուքներս էլ կտրուել են... Ես ինքս էլ մտածում եմ... նա այնպէս փոքրիկ, պիտանի, խելօք և բացի այդ զրազէտ տղայ է... նրան Աստուած էլ աչքից չե գցի, մարդիկ էլ կսիրեն...

— Դէ՛հ, ուրեմն էլ ի՞նչ ես ուզում, — անհամբերութեամբ հարցրեց Վիշինսկին։

Թփերի մթնում լսելի եղան հեկեկանք և ձեռքերի շրխկոց. դա Խրիստինան էր, որ յուսահատութեամբ կոտրատում էր ձեռքերը։

— Ախ, իմ թանկագինս, սիրելի՛ս... բայց ախր նրան աշխարհի ծայրն են ուղարկում... նա գրում է ինձ. — անգին մայրիկս, ես չեմ կարողանայ դիմանալ ճանապարհի հեռաւորութեան, այնտեղ ցրտին և օտար մարդկանց... եթէ ինձ այստեղ թողնէին, զոնէ երբեմն կարող կլինէի համբուրել ձերացած աչիկներդ... բայց երեւի ինձ վիճա-

կուած չէ այլ ևս տեսնել քեզ... երեւի իմ ճակատիս
զրած է օտարութեան մէջ մեռնել... արի՛ զոնէ մի
անգամ ևս, որ հրաժեշտ տանք իրար... Ես գնա-
ցի քաղաք... արտասուքից աչք չէի կարողանում
բաց անել, բայց գնացի և մոտց զօրանոցը. «Փի-
լիպկա» կանչեցի ես... նա դուրս վազեց սանդուխ-
ների վրա... ընկաւ իմ ոտքերս և սկսեց համբու-
րել... մայրիկս, ասում էր նա, որդուհետդ արտա-
սուքով,—ես քեզ վերջին անգամն եմ տեսնում այս
աշխարհում...

— Ի՞նչ է յիմար յիմար դուրս տալիս... մըրթ-
մըրթաց Վիշինսկին, մենակ նա չէ. հեռաւոր երկր-
ներ գնացողը... բոլորը գնում էլ են, վերադառ-
նում էլ...

— Վայ իմ թշուառ վիճակիս... հառաչում էր
Խրիստինան. յայտնի բան է գնում են, բայց նրա
նման թոյլերը հօ չեն գնում... ծնուած օրից նա
գունատ է եղել ու հիւանդոտ... յետոյ էլ ջերմն
ու տենդը սկսուեց:

— Դէ՛, որ այդպէս է, էլ ինչե՞ փիլիպին տուե-
ցիր... թող Անտօնին տալիր, նա աւելի առողջ է
և ուժեղ...

— Մի՞թէ ես էի տուողը... իրենք տարան. կան-
չեցին—նա էլ գնաց... նա մեծն է... Յովսէփնե-
րի տօնին քսանմէկերորդը լրանում է... Այդ բո-
լորը ոչինչ էր, միայն թէ առողջ լինէր... բայց
ախր նա բոլորովին հիւանդ է, նիհար, թոյլ...
դուք էլ սկսեցիք սովորեցնել նրան ու չվեր-
ջացրիք... մոռացաք խեղճ երեխային... դուր տե-

ղը փչացրիք, ո՛չ բանուոր դարձրիք, ոչ էլ տէր-
տէր:

— Դէ՛հ, այս էլ քեզ... այդ ի՞նչ նախատինք-
ներ են... պատասխանեց Վիշինսկին նեղացած—գոհ
եղի՛ր, որ առողջ որդուդ քեզ համար են թողել,
հիւանդին են տարել... էլ ի՞նչ ես ուզում... ես
ոչինչ չեմ կարող անել... գնա՛ բանիդ և այլ ևս
ամեն բոպէ չգաս մօտս... եթէ ոչ կբարկանամ և
քեզ էլ, որդուդ էլ դուրս կ'անեմ կալուածքիցս...

Եւ նա շարժուեց գնալու. բայց այդ բոպէին
մթութեան միջեց դուրս պրծան երկու ձեռքեր և
բռնեցին նրան, իսկ կարմիր շալով փաթաթուած
գլուխը խոնարհուեց նրա ձեռքի վրա.

— Սիրելի՛ս, անգինս... միջնում էր Խրիստի-
նան, համբոյրներով ծածկելով նրա ձեռքը... զթա՛
ինձ... դու մեր խեղճերից բոլորից խելօք ես... խոր-
հուրդ տո՛ւր, ո՞ւր գնամ, ո՞ւմ խնդրեմ, որ որդուս
այստեղ թողնեն... ա՛խ, եթէ դու ինքդ գնայի՛ր
քաղաք... դու ծանօթներ շատ ունես... նրանք
քեզ կլսեն, կհետեւեն... նա հօ քո հարազատ որ-
դին է, քո արիւնդ. քեզ համար ես իմ ամբողջ
կեանքս դժբաղդացրի... թագնուպսակի կարօտ մնա-
ցի... ոչ որ չ'օգնեց ինձ տուես կառավարելու, ո՛չ
որ չխղճաց ինձ թշուառիս...

Խրիստինան յանկարծ բնդհատեց իւր խօսքը.
գլուխը բարձրացրեց և առեց Վիշինսկու վրա իւր
թաց, սև աչքերը.

— Լսի՛ր Ստեփան... աւելացրեց նա, փայլատա-
կելով աչքերը,—ես չէի նեղանում քեզանից. երբէք

չեմ անիծել և չեմ էլ անիծելու... ես սիրել եմ քեզ աչքիս լոյսի պէս... դէ՛հ, ողորմած եղիր և օգնի՛ր ինձ Ֆիլիպիս ազատելու գործում...:

Վատ դրութեան մէջ ընկաւ Վիշինսկին. նա չգիտէր, ի՛նչ անէր և, մի ոտքից միւսը փոխուելով՝ խռխուում էր ու մթմթում:

— Դէ՛, լաւ, լաւ... բաւական է... մի կերպ կ'յաջողեցնեմ... տեսնենք. խորհրդակցեմ մէկի հետ, դուցէ...

Այդ բոպէին լսուեց մօտեցող կառքի խուլ դղրդիւնը: Վիշինսկին դողդողաց և ցած ձայնով ասաց.

— Շո՛ւտ արա, հեռացի՛ր... որ էլ հօտդ չլինի այստեղ...

Այդ ասելով՝ նա շտապեց դէպի պատշգամբը, որի առաջ կանգ առաւ կառքը և, դիմաւորելով հիւրին, մտաւ նրա հետ սենեակ:

Բ

Եկած հիւրը՝ պան Լիւզվիգ Պակրովսկին միջին տարիքով, բարձրահասակ, նիհար և համարձակ շարժումներով մի մարդ էր: Նա հագնուած էր վայելուչ ճաշակով: Ծնոտների վրա թողած միջուկը շրջանակում էր նրա գունատ դէմքը, նեղ ճակատը ամբողջովին ծածկուած էր խորշոփներով, իսկ ակնոյնների տակից փայլում էին նրա սուր, թափանցող աչքերը...

Նա եկել էր այստեղ հարեան զիւղի զիւղացիների գործով: Վերջիններս ցանկանում էին յետ առնել կալուածատէր Դել'սկուց այն արօտատեղիները և վարելահողերը, որոնք կից էին իրանց հողաբաժիններին: Դել'սկին, սրանց ասելով, անիրաւացի կերպով սեփականել էր իրեն այդ հողերը և Կապրովսկին վարում էր դրանց դատը: Այժմ՝ նրա դալու նպատակն էր՝ ստանալ զիւղացիներից գործը վարելու համար որոշուած գումարը:

Երբ Կապրովսկին սկսեց Վիշինսկուն պատմել այդ գործը, վերջինս, աչքերը լայն բացարած, բացականչեց.

— Աստուած ունեցէ՛ք... դա հօ մի վայրենի պահանջ է... այդ արօտատեղիները և հողը դարերից 'ի վեր Դել'սկուն են պատկանել... ես այդ հաստատ գիտեմ, որովհետեւ ինքս այնտեղ եմ ծնուել, մեծացել և ծերացել...

Հըմ... ասաց լրջօրէն Կապրովսկին, ձեռքերը դնելով զրպանները... կամ կտանեն, կամ կտարուեն...

Եւ նա հռհռալի ծիծաղալով թեքուեց դէպի Վիշինսկին և հեզնօրէն ասաց նրա ականջին.

— Եթէ մենք փաստաբաններս միայն այնպիսի գործեր վերցնէինք, որոնք կարելի է տանել, այդպիսով մեր ամբողջ դասակարգը սովից կ'մեռնէր:

Կապրովսկու դէմքի արտասովոր ժպիտը ապացուցանում էր, որ այդ մարդը սաստիկ խաբեբայ է: Նա պատմեց Վիշինսկուն իւր մի քանի պաշտօնակիցների մասին, որոնք, զանազան մոլթմոլթ դատեր վարելով, մեծ գումարներ էին վա-

տակել: Դրանցից մէկը դրդել էր մի շեխախտիչ զատ սկսելու իւր հարեանի հետ մի կտոր հողի համար, որը հարիւր մանէթից աւելի չէր արժէնայ: Երկու տարուայ ընթացքում, տասնապատիկ աւելի դուրս ծծելով նրանից, փաստաբանը ոչ միայն տանուլ տուեց դատը, այլև զրկեց շեխախտիչին իւր ձիերից ու կովերից, որոնց հրապարակական աճուրդով ծախեցին: Մի ուրիշ փաստաբան էլ ձեռք էր դրել մի ինչ որ բաւականին ունեւոր այրի կին: Հաւատարմութեւ լի ստանալով վերջնիցս վարելու նրա զանազան գործերը ու դատերը, փաստաբանը մի քանի տարուց յետոյ նրա ստացուածքի տէր է դառնում, իսկ խեղճ այրին, դեռ աչքը մի բաց ու խուփ չ'արած, դուրս է վռնտուում իւր սեփական տանից...

Փաստաբանը Վիշինսկուն շատ այդպիսի բաներ պատմելուց յետոյ, պատմեց և այն, թէ ի՞նչ տեղեր է եղել ինքը, ի՞նչ է տեսել, կարգացել և արել:

Այդպիսի խօսակցութիւններով անցաւ ամբողջ դարնանային երեկոն: Վիշինսկու բնակարանում տիրեց խորին լռութիւն. բոլորը քնած էին, բացի կառավարչից՝ իրենից: Սա անկողնում պառկած մտաբերում էր իւր կեանքը. — նա գիւղական շեխախտիչ էր: Հայրական ազարակով մեծացան չորս եղբայր Վիշինսկիները. երկու մեծ եղբայրները ամուսնացան և քնացին իրենց տեղումը, իսկ երկու փոքրերը գնացին օտարութեան: Բայց Ստեփանը հեռու չգնաց: Ինքը լինելով ժիր ու աշխատասէր տղայ, նա Կրասնավոլսկու կալուած-

քում դրազրի պաշտօն ստացաւ: Այդ կալուածատիրոջ մառաննում էր այն ժամանակ ծառայում գեղեցիկ, վայելահասակ, առողջակաղմ ու սեռաչեաց Խրիստինան: Վիշինսկին սիրահարուեց նրա վրա, մոռանալով, որ գեղջկուհի է: Իւր ճկունութեամբ Խրիստինան մատաղ եղջերուի էր նմանում: Նրա աչքերից կրակ էր թափւում, սադափի ատամները փայլում էին վարդագոյն շրթունքների տակից: Մաղերի հիւսուածքը գոտկատեղից էլ ցած էր իջնում և նա, մազերը բացարած ժամանակ, մի ծովային հաւերժահարսի էր նմանում:

Խրիստինան աշխատասէր աղջիկ էր: Շարունակ օտար մարդկանց մէջ ապրելով, նա ձրի իսկի մի կտոր հաց էլ չէր դրել բերանը: Նա վախկոտ էր և ամաչկոտ, որովհետեւ որբ լինելով, ենթակայ էր ամեն մէկի զրկանքին ու վերաւորանքին: Վիշինսկին նոյնպէս երիտասարդ էր, ժիր և մի փոքր էլ գեղեցկադէմ: Երիտասարդները սիրեցին մէկ-մէկու և նրանց այնպէս էր թւում, որ իրենց սէրը անվերջ է լինելու: Ունեւոր գիւղացիների երիտասարդ որդիները, տեսնելով նրա գեղեցկութիւնը և աշխատասիրութիւնը՝ նշանախօսներ էին ուղարկում մօտը, բայց Վիշինսկին նրանց բոլորին էլ միշտ դուրս էր անում:

Մի անգամ նա առիթ ունեցաւ մի քանի շաբաթով գործով քաղաք գնալու: Այնտեղ պատահամբ ծանօթացաւ մի շեխախտիչ երիտասարդ աղջկայ հետ, բայց սիրելով Խրիստինային, նա սկզբում դրա մասին սկի չէր էլ մտածում: Սակայն,

յաճախ տեսնուելով նրա հետ, փոքր առ փոքր մոռացաւ Խորիստինային և, շնորհիւ ընկերներն ու բարեկամներն թախանձանքին, վերջ ի վերջոյ համաձայնուեց նրա հետ ամուսնանալ: Նա վերադարձաւ տունն արդէն պսակուած: Սյդ տեսնելով սեւ աչեայ ու սեւահեր Խորիստինան, արտասուէր աչքերին թողեց ու հեռացաւ կառավարչի տանից, տանելով իւր հետ մի ծծկեր և մի նոր մանեկող երեխաներ:

Ամուսնութիւնից յետոյ Վիշնիսկին երկար ժամանակ չէր կարողանում մոռանալ այդ աղջկան: Յաճախ նրա սիրտը կտրատուում էր կարեկցելուց ու ցաւից. և նա սրբելով թաշկինակով քրտինքը շուտով հեռանում էր դաշտը, որ այնտեղ մոռանայ նրան և բացուի... Սակայն, ժամանակի ընթացքում, երբ նա աղջիկներ ունեցաւ և սկսեց նրանց համար օժիտներ պատրաստել, հազարից մէկ էր մտաբերում իւր նախկին սիրուհուն և այն էլ միայն այն ժամանակ, երբ նա որևէ խնդրով յիշեցնում էր իւր զոյութիւնը:

Սյդպիսի առիթ ներկայացաւ և այդ երեկոյ:

— Դէ, ի՞նչ կարող եմ ես խորհուրդ տալ, մտածում էր նա և ինչով կարող եմ օգնել նրա Փիլիպին... զինուոր վերցնում են, որ ուղարկեն զանազան տեղեր և ոչ թէ ամենին իրենց ծնած տեղերումը թողնեն: Եւ վերջապէս ես ի՞նչ մի մեծ մարդ եմ, որ իշխանութիւնը իմ խօսքս կատարի... բացի սրանից իմ ի՞նչ գործս են այդ բոլորը... իսկ եթէ խորհրդակցեմ Կապրովսկու հետ... երեւում է,

նա շատ խորամանկ մարդ է... և՛ բացի այդ գիրք ունի... մի հարցնեմ նրան, գուցէ մի բան կ'ասի... գուցէ նա մօր անունից խնդիր կտայ, որ Փիլիպին հիւանդութեան պատճառով թողնեն այստեղ... Բայց յանկարծ, որ նա կնոջս մօտ բերնից խօսք թուցնի... այն ժամանակ բանս վատ կլինի... Ձէ, լաւ է նրան ոչինչ չ'ասել... Եւ վերջապէս ի՞նչ եմ ես շատ մտածում նրա համար, հօ մենակ նա չէ այդպիսի դրութեան մէջ... ուրիշ մայրերն էլ կցանկանային, որ իրանց որդիները մօտները քնային... դոնէ աշխարհ կտեսնի, մարդ կդառնայ... կնոջ խելք է ախր... լաց է լինում, ինքն էլ չգիտէ ինչի՞ համար... է՛հ, թող լաց լինի... դրա փոխարէն Փիլիպը վերադառնալուց աւելի շատ կ'ուրախանայ... Եւ Վիշնիսկին, շարժելով ձեռքը, շուռ եկաւ միւս կողքի վրա և քնեց:

1002
1469
634

9.

Դուրս փախելով աղարակից, րադառնում էր տունն նոյն ճանապարհով, բայց աւելի դանդաղ, քան զնալիս: Սյժմ նա շտապելու բան չ'ունէր:

— Է՛հ, երեւի իմ բաղդս էլ այդպէս է էլի. — ասաց նա ինքն իրեն և լռեց:

Սյդ միջոցին սկսեց անձրեւ տեղալ. քամին փռփռացնում էր նրա դերեան, գլխին կապած կարմիր շալի վրայով ջուրը առուակի նման հոսում էր օձիքից ներս. բոբիկ ոտքերի տակից շթի էր



տալիս ցեխը: Երեք վերստ անցնելուց յետոյ, նա նորից խօսեց.

— Դեռ չեն բնել... չլինի՞ երեստան Հիւանդացիէ... Այդ խօսքերը ասել տուեց նրան ագարակի շինութիւններից երեացող ճրագը: Նա փոխեց ճանապարհը—անցաւ մի կտոր տարածութիւն հերկուած հողի վրայով, ապա անասունների բակի կողքովը ցած իջաւ ցածր ցանկապատից և այդպիսով կրճատելով ճանապարհը՝ յայտնուեցաւ այն խրճիթի առաջ, որի պատուհանից լոյս էր երևում: Այդ խրճիթը բաղկացած էր չորս մասից. իւրաքանչիւր մասը, որ կազմուած էր մի առանձին խրճիթից և փոքրիկ սենեակից՝ առանձին մուտքով, տեղաւորուած էր իւր մէջ մի ընտանիք: Վօլկայի տնտեսական աշխատանքի համար հարկաւոր էր ութ բանուոր, իսկ չորս մասից բաղկացած խրճիթը մի հատ էր: Կալուածքի կառավարիչը շատ անտես մարդ էր և չէր ցանկանում ուրիշ խրճիթ շինել. այդ պատճառով նա միանգամ հարցրեց Վիշնևսկուն.

— Նոր խրճիթ շինե՞նք թէ չէ Վօլկայում:

— Ի՞նչ կարիք կայ,— պատասխանեց Վիշնևսկին, որը կամենում էր գլխաւոր կառավարչի աչքին լաւ երեւալ:

— Հապա ի՞նչ անենք բանուորներին.

— Իւրաքանչիւր բաժնում կարող են երկու ընտանիք տեղաւորուել:

— Եւ դուք կարծում էք, որ նրանք այնտեղ կարող կլինեն տեղաւորուել...

— Համարձակ... միթէ նրանց էլ որեւէ առանձին յարմարութիւններ է պէտք...

Եւ յիրաւի՛, տեղաւորուեցին: Ի՞նչ անէին. բանուորը, որտեղ էլ ապրելու լինի, դարձեալ նոյն բանուորն է, բայց Վօլկայում աւելի վատ էր, քան ուրիշ տեղերում, կամ ուրիշ կալուածատէրերի մօտ... Իվանը վաղուց է արդէն ծառայում էր և ապրում երբեմն այս, երբեմն այն բանուորների հետ: Մի տարի առաջ նրան տուեցին մի առանձին բնակարան, բայց դրա հետ միասին տնկից արլին երիտասարդ բանուոր Անտօնին իւր մօր Խրիստինայի հետ: Դրանք մինչև այդ ժամանակ ապրում էին բանուոր Մատվէյի բաժանմունքում և տեղափոխուեցին նրա համար, որ չէին կարողանում հաշտ ապրել իրենց նախկին տնկիցների հետ: Մատվէյը և իւր կինը կռուարար մարդիկ էին, ուստի և յաճախակի կռիւներ էր պատահում նրանց մէջ: Իվանը և իւր կինը խաղաղ մարդիկ էին և դիտէին սիրով ապրել ամեն մէկի հետ: Նրանք մինչև անգամ բարեկամացան Խրիստինայի հետ. գուցէ և այն պատճառով, որ նա երբեք կռուի առիթ չէր տալիս և նոյն իսկ լռում էր, երբ կալում էին նրան կամ կատակներ անում նրա հաշուին: Բացի այդ Խրիստինային դիւր էին եկել Իվանի երեստները և նա իւր հարազատների պէս նայում էր նրանց:

Ներս մտնելով՝ Խրիստինան արտասանեց սովորական ողջոյնը, որ գոյութիւն ունի լեհացի զիւղացիների մէջ: Նրան պատասխանեցին նոյն խօսքերով երեք առնացի և մէկ կանացի ձայներ:

Խրճթի այդ բաժանմունքը բաւական մեծ էր, միայն առաստաղը ցածր էր և ծխից սեւացած, յատակը կրից և պատուհանը փոքր, շրջանակներից էլ սաստիկ քամի էր փչում: Չնայելով, որ խրճիթը մեծ էր, բայց նա սաստիկ նեղ էր երեւում, նախ նրա համար, որ ցածր էր և երկրորդ՝ որ այնտեղ դրուած էին ամեն տեսակ դիւղատնտեսական գործիքներ, ինչպէս վեղրոներ, տաշտեր, մանրիչներ, կարժարներ, կաղամբով ու բազուկով լի տակառներ, ևլն ևլն: Խրճթի մի անկիւնը բռնում էր ռուսական-վառարանը, որի վրայից երեւում էին երկու զոյգ մանկական ոտքեր: Վառարանի տակ թառ էին եղած երեք հաւ և մի աքաղաղ, իսկ նրա ընդարձակ առաջքի վրա՝ վերմակով ծածկուած՝ պառկած էր մի կին և երբեմն-երբեմն նիհարած ձեռքով շարժում էր սև առաստաղից կախուած օրօրոցը:

Այդտեղ քնած էր մի մանուկ, որ երկու օր առաջ էր ծնուել. իսկ վառարանի վրա պառկած կինը ծննդականն էր՝ Իվանի ամուսինը: Առաջուայ տարիները նա մի օրից աւելի չէր պառկում և եթէ ոյժ էլ չունենար ծանր աշխատանքներ կատարելու, զոնէ կարողանում էր կարտօֆիլ մաքրել, երեսաներին նայել ևլն: Բայց այս անգամ՝ նա թոյլ էր, նիհարած, սեւացած և արդէն չորրորդ օրն էր, ինչ պառկած էր:

Միւս տանտիկինն էլ, յայտնի չէ թէ ինչու, տանը չէր. այդ պատճառով և ընթրիքը բաւականին ուշացաւ: Իվանը և Անտօնը, դաշտից վերա-

դառնալով, դրեցին գութանը իրա տեղը, ձիաներին ջրեցին, ուտելու պաշար տուեցին և իրենք էլ, մի քանի հայհոյանքներ ուղղելով միւս բանուորների հասցէին, եկան ու սկսեցին ընթրիք պատրաստել:

Խրիստինայի ներս մտնելու ըոպէին Անտօնը կանգնած էր վառարանի առաջ գդալը ձեռքին և երբեմն-երբեմն խառնում էր կճուճի միջի արգանակը: Դա մի շատ երիտասարդ, բայց առողջակազմ ու գեղեցկազէմ պատանի էր. մազերը բաց շեկադոյն իսկ աչքերը կապոյտ: Իվանը նոյնպէս առողջ, ամրակազմ, լայնաթիկունք մի դիւղացի էր. սեւաչեայ, սև բեխերով և թուխ դէմքի շուրջը բուսած սև աղուամազով: Նա սեղանի առաջ նստած խօսում էր ինչ որ հիւրի հետ՝ ուղղած նրան իւր բաւականին սիրալիր, բայց և կասկածալից հայեացքը: Հիւրը մի նիհար ու ժիր ծերունի էր—դէմքը գունատ և թառամած, քիթը երկար, կզակը դուրս ընկած՝ վրան էլ բուսած նոսր, սպիտակած միրուք: Մոխրագոյն աչքերը համարձակ՝ մինչև իսկ՝ լպիրշ արտայայտութիւն ունէին. նրանց փայլի մէջ իսկոյն կարելի էր նկատել մի տեսակ խստութեան ասես, թէ ազազութեան բնաւորիչ գիծ: Նա հազին ունէր դեղին, փայլուն կոճակներով մահուդէ բաձկոն, որը բոլորովին նման չէր դիւղացիների հագնելու բաձկոնին: Կոճակի օղակից կախ էր ընկած բրոնզէ շքանշանը: Խրիստինայի գալուստը չընդհատեց նրանց խօսակցութիւնը: Պատասխանելով վերջնիս ողջոյ-

ներն, նրանք շարունակեցին խօսքը, առանց ուշադրութիւն դարձնելու, թէ ի՞նչ էր կատարւում իրենց շուրջը:

Խրիստիանն, գլուխ տալով որդուն և նրանից փոխադարձաբար պատասխան ստանալով, կանգնեց վառարանի դիմաց և, ձեռքը ծնոտին դրած, սկսեց դիտել վառվող կրակը: Նրա դէմքի նուրբ զծերի և նախկին կրակոտ աչքերի անշարժութեան մէջ անհուն ախրութիւն էր նկատուում: Անտօնը, գրաւով խառնելով կճուճի ճարպախառն արգանակը, նայեց մօրը և հարցրեց.

— Զ՛ր, ի՞նչ կայ մայրիկ.

Պառաւր, առանց փոխելու իւր դիրքը և մինչև անգամ առանց նայելու որդուն, պատասխանեց.

— Ո՛չինչ որդի՛ս... մեր Ֆիլիպը կ'երթայ հեռաւոր երկիրներ, և իմ աչքերս էլ չեն տեսնի նրան... երեւի մեզ էլ այդպէս է վիճակուած, որ ոչ մի տեղից օգնութիւն չգտնենք...

Անտօնը հոգւոյ հանեց և շարժեց գլուխը: Մանուկը սկսեց լաց լինել օրօրոցում: Խրիստիանն սթափուեց և իսկոյն մօտեցաւ ծննդականին, առանց մտածելու իւր թաց հագուստը և ցրտից ու ցեխից կարմրած ոտները տաքացնելու մասին: Վերջինս ցած ձայնով մի ինչ որ բան ասաց նրան և՛ հոգւոյ հանելով՝ երեսը դարձրեց դէպի խրճիթը: Խրիստիանն հանեց երեխային օրօրոցից և տուեց մօրը: Այնուհետև նա նստեց վառարանի ափին և ձեռքերը ծալելով թաց ծնկներին, նոր ուշադրութիւն դարձրեց Իվանի և հիւրի խօսակ-

ցութեան վրա: Դրանց առաջ դրուած էր մի շէշ օղի և մի թիթեղի բաժակ:

Նրանք սիրալիւր խօսքերով փոխադարձաբար հիւրասիրում էին միմիանց և, ամեն բաժակի դրլ-խին ասում. «ողջ լինիք»: Իվանը շատ խմել չէր սիրում, այդ պատճառով և հիւրի խմած իւրաքանչիւր երկու բաժակին նա մի բաժակ էր խմում: Վերջինս մի ինչ որ բանի մասին տաք-տաք խօսում էր նրա հետ.

— Աստուած վկայ, — ասում էր նա, յառելով իւր խորամանկ աչքերը Իվանի դէմքին. — ես եթէ քո տեղը լինէի, վաղուց արդէն հողի և խրճիթի տէր դարձած կ'լինէի, և իմ սեփական ունեցածովս կ'ապրէի... Մի՞թէ իսկապէս քեզ համար լաւ է բանուորութիւն անել և դարմանախառն հաց ուտել, որ դու թոյլ ես տալիս հօրեղբորդ տիրելու քո հողին:

Իվանը շարժեց իւր սևահեր գլուխը.

— Ի՞նչն է լաւ, — պատասխանեց նա, — բայց ի՞նչ պէտք է անել: Ես շատ փոքր էի, խելքս դեռ բան չէր կտրում, երբ չար մարդիկ զրկեցին ինձ՝ որբուկիս: Հէնց որ հայրս մեռաւ, հօրեղբայրս այն բոլորին բոլոր հողը, խրճիթը և ողջ ունեցած — չունեցածը իրեն սեփականեց: «Մասնաժողովը, — ասում է — ինձ է տէր նշանակել, ուրեմն հողը իմն է, եղբայրս իբրև բանուոր էր ծառայում ինձ մօտ և այդ բոլորից նրան իսկի մի չոփ էլ չի հասնում...» Շատերը ինձ խորհուրդ էին տալիս բողոքել դատարանին. ես խնդիր տուեցի, բայց հօրեղբայրս

այնպիսի մի փաստաբան վարձեց, որ նա, ինչ սուտումնուտ վայրահաչուծիւններ քեֆը տուեց, սկսեց ասել դատարանում: Դէ՛հ, ես էլ այդպիսով տաբուեցի և հողատիրոջ որդուց դարձայ մի անհող բանուոր:

Սյդ ասելով, նա թափ տուեց ձեռքը, մի կէս բաժակ օղի ածեց և, «ողջ լինիք» ասելով հիւրին, խմեց:

— Ի՞նչ պէտք է անել.— շարունակեց նա, — կորած բանը յետ չես դարձնի... բայց Աստուծոյ ողորմութեամբ չենք մեռնի սովեց կնոջս ու երեխաներիս հետ: Աներս կնոջս հարիւր մանէթ օժիտ է տուել... նա հարուստ է... այդետէր է... էլ ի կտայ... չէնց որ — ասում է, — այնքան փող կ'ողողվես, որ կարող կ'լինիս մի կտոր հող գնել, այն ժամանակ էլ ի հարիւր բուրլի կտամ... Գուցէ, Աստուած կ'յաջողէ, կ'ողողվեմ... այն ժամանակ կ'գնեմ... կ'ինս նոյնպէս մի փոքրիկ բան կ'աշխատէ... ռոճկիցս էլ մի փոքրիկ մաս յետ կ'ձգեմ... դէ՛հ, այդպիսով կ'ողողվուի էլ ի... Բիչ ու միջ հաւաքած հէնց հիմա էլ ունիմ...

— Շատ ունե՞ս, — հարցրեց հիւրը՝ ներքուստ նախանձելով: Իվանը խորամանկութեամբ ժպտաց:

— Է՛հ, ո՞վ գիտէ. — ասաց նա ծիծաղելով, — շատ է թէ քիչ, բայց մի կտոր բան կ'այ...

— Լա՛ւ, բայց այն հողը, որ հօրեղբայրդ ապօրինի կերպով խլել է... այնպէս էլ կ'մնայ...

— Ի՞նչ պէտք է անել. — հողուց հանեց նա. ո՞վ գիտէ ով է մեղաւորը, նա թէ ես... է՛հ, թող Աստուած անէ մեր դատաստանը...

— Այ դու յիմար արարած, — բացականչեց հիւրը. — Դու, որ լուում ես ու համբերում, կարծում ես, ամեն բան վերջացած է. ինչի՞ փաստաբան չես վարձում և հօրեղբորդ նորից դատաստանատուն բարշ տալիս՝ նրա հասցրած զրկանքի համար... Կարծում ես, մենակ նա՞ կարող է իրեն համար վայրահաչ ու ստախօս փաստաբան վարձել. դու չես կարող... Ի՞նչ ես խօսում դու, ես քո զործդ իմ հինգ մատներին պէս դիտեմ... նրա բոլոր պահանջները մի ձուլի կ'ձեպի արժէք չ'ունեն... Դեռ տաս տարի չի անցել և դու կարող ես բողոքել... հասկանում ես...

Չիւրը խորհրդաւոր կերպով ձեռքը վեր բարձրացրեց և, մի պերճախօս շարժում անելով, աւելացրեց.

— Դու դեռ իսկական դատաստան չ'ես տեսել, չ'գիտես, ի՞նչ կարելի է անել այնտեղ: Ես տեսել եմ. — դա մի ահագին դահլիճ է եկեղեցու նման. մէջ տեղը դրուած է կարմիր մահուգով ծածկուած մեծ սեղան, իսկ սեղանի առաջ նստում են աստիճանաւորները ոսկէկար օձիքաւոր նշանադրեսները հագներին:

— Ոսկէկար օձիքաւոր, — հարցրեց Իվանը՝ զարմացած ու շարքութեամբ լսելով հիւրի ամեն մի խօսքը.

— Ապա ի՞նչ էիր կարծում... — չէ՛, քո բաձկունի նման բաձկոնով... ամբողջ նշանադրեստը փայլում է ու պսպղում ոսկու նման... Ահա, այդ աստիճանաւորների առաջ են կանգնում փաստա-

բանները ու խօսում։ «Ուրեմն այդպէ՛ս, պարոնայք, այս ինչ և այն ինչ բաները ինկատի չեն առնուած...» իսկ դատաւորները ամբողջ ժամանակը լռում են ու լսում։ Յետոյ, երբ փաստաբանը վերջացնում է իւր խօսքը, վեր են կենում ու դնում...։

— Գնում ե՞ն, ռւր,— հարցրեց Իվանը ավստ-սալով. կարծես նա ցաւում էր, որ չկարողացաւ լսել հետաքրքիր պատմութեան վերջը...։

— Սյո՛, գնում են միւս սենեակ՝ փաստաբանի ասածները քննելու. յետոյ վերադառնում են և բո-լորը կանգնում են...։ դատարանի նախագահը բարձ-րաձայն կարդում է. «դատարանը վճռեց յարգել Իվան Գողգամայի խնդիրը և, վերցնելով նրա հօրեղբայր Պաւելից հողը և գոյքը, տալիս է նրան յաւիտե-նական ժառանգութիւն...։

Պատմութեան այդ անակնկալ վերջաբանի վրա Իվանի աչքերը փայլեցին ուրախութեամբ.։

— Օհ՛, բացականչեց նա.— երանի՛ թէ դա ճիշտ լինէր։

— Ինչե՞ չի կարող լինել,— ասաց Նիկոլայը, (այդ-պէս էին կոչում հիւրին)— եթէ դու կկամենաս, ես քեզ մի այնպիսի փաստաբան կտամ, որը մի-նիստրին իրան է դարմացնում, իսկ երբ նա սկը-սում է խօսել դատարանում, բոլոր դատաւորները միայն բերանները բաց լսում են նրան...։

Իվանը ուրախացաւ.։

— Դա հօ նա չէ՞, որը վարում է Միլեվօի գիւ-ղացիների դատը Դեյսկու հետ.— հարցրեց նա։

— Սյո՛, հէնց նա ինքն է. դու նրան տեսե՞լ ես

— հարեանցի կերպով տեսել եմ. երբ որ խոտ էի տանում Միլեվօյով, նա պանդոկի առաջ խօ-սում էր գիւղացիների հետ...։ երեւի շատ խելօք կլինի...։

— Օհ՛, քեզ բան եմ ասում, այնպէս մի խըն-դիր է գրում, որ մինիստրը ինքը զարմանում է...։

Եւ հարուստ էլ է երեւի...։ այնպիսի մի հաստ ոսկէ շղթայ ունէր կրծքին, որ հարկաւոր ժամա-նակը շուն էլ կարելի է կապել նրանով...։

— Ինչե՞ չի լինի հարուստ, քանի որ մարդիկ նրա դուռը սրբի դուռ են դարձրել...։ այդ նրա հա-մար է, որ նա ինչ գործ էլ վերցնի, միշտ տանում է...։

— Միթէ՛.

Միշտ...։ այնքա՛ն նա խելօք է և բարի...։ ամեն մի աղքատի էլ օգնում ու բաղդաւորեցնում է, ինչպիսի դժբաղդութեան մէջ էլ որ լինի նա։

Իվանը ընկաւ խոր մտածմունքի տակ։

— Լսի՛ր, Նիկոլայ, — ասաց նա ցած ձայնով մի րոպէաչափ լռութիւնից յետոյ, — թա՛նկէ վերցնում բո՛ այդ փաստաբանը։

Նիկոլայը շարժեց յօնքերը. նա ինչ որ բան հաշւում էր մատներով և քթի տակ մրթմրթում։

— Ոչ,— խօսեց նա, — շատ թանկ չի վերցնի. շատ-շատ հինգ տոկոս կվերցնի...։ և վերջապէս նա երբէք աւել չի վերցնում ոչ ոքից։

— Իսկ ի՞նչ են նշանակում այդ տոկոսները.

— Տոկոսը վարձատրութիւն է, — բացատրեց Նի-կոլայը. — առանց դրան նա իսկի մի մատն էլ չի շարժի։ Եւ եթէ նա ասէ. — Իվան, բո՛ գործի համար հարիւր

մանէթ հարկաւոր է, տուր, դու պէտքէ տաս. եթէ մինչեւ անգամ առաջուց էլ պահանջի, այդ դէպքում էլ չպէտքէ մերժել... Թէ չէ իսկի վրադ էլ չի նայի... Դու ի՞նչ ես որ նրա համար... քո գործիդ պէս գործեր է կատարում նա... Քեզ ասում եմ թանկ չե վերցնի, հինգ տոկոսից ոչ աւել... առանց դրան բան չենել չե կարելի. դու հօ նրա եղբայրը կամ քեռին չես, որ քեզ համար զուր տեղը չարչարուի:

Ակնյայտ էր, որ Իվանը առանձին ուշադրութեամբ էր լսում Նիկոլային, որովհետեւ նա անթարթ նայում էր նրա աչքերին. կարծես ուզում էր կլանել նրա ամեն մի խօսքը:

— Ուրեմն, եթէ ես դնամ նրա մօտ իմ գործիս համար խնդրելու, պէտքէ փող տանեմ էլի... շատ պէտքէ տանեմ...

— Չգիտեմ... եթէ հինգ տոկոսով հաշուելու լինենք կալուածքներիդ դնից, երեւի այն ժամանակ մի քսան-երեսուն մանէթ հարկաւոր կլինի տալ...

— Տասը հերիք չէ՞.— սկսեց արդէն սակարկութիւն անել Իվանը.

— Կերթաս վաղը նրա մօտ.— հարցրեց Նիկոլայը ուրախացած, — նա վաղը լուսաբացին Լեսնոյից ճանապարհ է ընկնելու դէպի պանդոկը Միլեվօի գիւղացիների հետ բանակցելու համար... Եթէ դու կդաս, ես քեզ կներկայացնեմ նրան... դու հօ օտար չես ինձ համար... ես քեզ դեռ մանկութիւնիցդ գիտեմ... երկուսս էլ Միլեվօից ենք, ես ղինուոր գնալու ժամանակ դու դեռ երեսայ էիր, շապկանց վազվազ էիր տալիս...

Իվանը ընկաւ մտածմունքի տակ. նա կարծես ատտանուում էր:

Այդ րոպէին ընթրիքը բերեցին և դրեցին սեղանի վրա. հաց բերողը Անտօնն էր, իսկ արգանակը Խրիստինան բերեց: Չորս փայտէ գդալներն էլ կձուճի վրա շարելուց յետոյ, նա խաչեց ձեռքերը և իւր անշարժ հայեացքը ուղղեց Նիկոլայի վրա: Իվանը կտրակեց հացը: Անտօնը գդալը ձեռքին սպասում էր մեծերի սկսելուն, որ ինքն էլ ուտի: Խրիստինան շարունակ նայում էր Նիկոլային:

Սա ծիծաղեց.

— Ի՞նչ ես այդպէս անթարթ նայում վրաս, Խրիստինա, նոր ես տեսնում ինձ ինչ է.— հարցրեց Նիկոլայը.

Պառաւր, աչքերը չդարձնելով նրանից՝ մտածեց— մտածեց և վերջապէս խօսեց.

— Ոչ նոր եմ տեսնում քեզ, Նիկոլայ, և ոչ էլ ես օտար եմ քեզ համար, ինչպէս և Իվանը... երկուսս էլ Միլեվօից ենք... ես նոյնպէս Միլեվօից եմ... մենք բոլորս էլ Միլեվացիներ ենք... միայն ես մի խեղճ՝ որբուկ էի, որին ոչ ոք չցանկացաւ խղճալ... զոնէ դու խղճա՛ս, Նիկոլայ, օգնի՛ր, ազատի՛ր... Ես քեզ լսում էի, թէ ի՞նչ էիր հասկացնում Իվանին և ահա՛ ինչ վճռեցի, եթէ այդ փաստաբանը նրան կարող է օգնել ինձ էլ կ'օգնի... եթէ նա ուրիշներին ազատում է, իմ Ֆիլիպին էլ կ'ազատէ...

Նա լռեց: Աչքերի թափանցող հայեացքը աղերսալից արտայայտութիւն ստացաւ: Տղամարդիկ արդէն սկսել էին ուտել արգանակը, բայց նա դեռ

կանգնած էր և շարունակ նայում էր Նիկոլային.

— Այո, խեղճ Ֆիլիպ, — ասաց վերջինս՝ կեղծ ցաւակցութեամբ շարժելով պուլսը. — Հեշտ չէ երկտասարդ զինուորի կեանքը, որին խելով մայրական գրկից՝ կանգնեցնում են շարքերի մէջ... անձ, ձախ... մարշ... Աստուած ինքը ազատէ, եթէ հրացանդ էլ սխալ բռնեցիր, կամ սխալ շուռ եկար... նոյն ըոպէին մօտենում է ֆելդֆեբելը և տուր որ կտաս ատամներին...

— Առանց այն էլ զինուորի կեանքը շատ ծանր է, — շարունակում էր Նիկոլայը, — իսկ այնտեղ, ուր քո Ֆիլիպին են ուղարկելու, աւելի վատ... ես ինքըս եղել եմ այնտեղ և գիտեմ... այնքան ցուրտ է, այնքան ցուրտ, որ մարդու ամբողջ կաշին տրաքտրաքէ գալիս... Հէնց որ մի բան չէիր ուտում, իսկոյն փորումդ սառուց էր կտրում... ես իհարկ է հիւանդացայ, դեռ ես առողջ գիւղացի էի, կարողացայ տանել, իսկ քո Ֆիլիպդ ի՞նչ է... մրսկանի մէկը... ի՞նչ նրա բանն է դիմանալ...

Խորիստինան, որ նոյնպէս սկսել էր ուտել, չկարողացաւ գլխը հասցնել բերանին և կանգնեցրեց կիսաձանապարհին: Նրա դէմքը կարծես քարացաւ, ձեռքը դողաց. նա մի ձիւ արձակեց և՛ բռնելով գլուխը՝ ընկաւ նստարանի վրա.

— Աստուած իմ, Աստուած, — ողբում էր նա՝ այս ու այն կողմը շուռ գալով:

— Իէ՛հ, հերիք է մայրիկ, հերիք է, հանգստացիր... միխթարում էր նրան Անտօնը աղիողորմ ձայնով, որով բոլորի գուժը շարժում էր.

— Է՛հ, յիմար կնիկ, — խօսեց Նիկոլայը, — էլ ի՞նչ կայ այդպէս յուսահատուելու ու սուգ անելու... Աստուած ողորմած է... նա արդէն ուղարկել է քեզ մօտ այնպիսի մի մարդ, որը կարող է ազատել որդուդ... եթէ նա ցանկանայ, քո Ֆիլիպիդ այստեղ կթողնեն... մինչև անգամ դուցէ ձմեռը Միլեվօ կ'ուղարկեն ծառայելու...

Կարծես մէկը Խորիստինայի ձեռքից բռնեց և ոտքի կանգնեցրեց. նա իսկոյն վեր կացաւ և վայրկենաբար յայտնուեց Նիկոլայի կողքին.

— Բարեւոք... հարազատս... աղաղակում էր նա, համբուրելով Նիկոլայի փէշերը. — օգնիր ինձ, օգնիր...

— Լա՛ւ, կ'օգնեմ, բայց իմացի՛ր, որ դրա համար էլ հինգ տոկոս պէտք է վճարես... առանց դրան ոչինչ չի լինի... և եթէ դու փող ունես...

— Ունե՛մ, ունե՛մ, իմ անգին Նիկոլայ, այդ այն փողերն են, որ ես քսան տարուայ ընթացքում արիւն-քրտինք թափելով եմ աշխատել... պահում էի որդիներին ու իմ սե օրուայ համար... կէսը կտամ Ֆիլիպիս ազատելու, կէսն էլ կպահեմ Անտօնիս համար... ես աշխատել եմ, հնձել եմ, բաղահան եմ արել, ձեռքերիս կաշին մաշկել եմ, պաս եմ պահել, ոտաբոբիկ եմ ման եկել և բոլորը դրանց համար եմ հաւաքել...

— Է՛, ես իսկի չգիտեմ ի՞նչ անեմ, գնամ թէ չէ քո այդ փաստաբանի մօտ. — խօսեց Իվանը.

— Գնա՛, Իվան, գնա՛, լսուեց ծննդականի քաղցր ու քնքուշ ձայնը. — դէպքը ձեռքիցդ մի՛ բաց թող...

փորձի՛ր... Կարելի է հոյը քեղ կրնկնի և այն ժամանակ վերջ կլինի մեր այդ աղքատութեան: Իմ բաղդիցս է, որ ես էլ այդպէս թոյլ եմ, թէ չէ, ինքս կ'երթայի նրա ոտքերը ընկնելու: Գնա՛, գնա՛, ես թոյլ եմ, դուցէ և շուտով մեռնեմ... դոնէ մահիցս առաջ կ'իմանամ, որ դու դադարել ես վարձկան բանուորի հաց ուտելուց և մեր զաւակները...

Նա չկարողացաւ վերջացնել... ոյժերը սպառեցին... Կանչեց Խրիստինային և տուեց նրան նորածնին, որ դնէ օրօրոցի մէջ:

Իվանը նայեց վառարանին, որի վրա պառկած էր նրա հիւանդ կինը և լալիս էր նորածին մանուկը.

— Է՛հ, ասաց նա՝ վերկենալով սեղանից, — կ'երթամ, թող ինչ լինելու է, լինի՛, մի քիչ էլ փող կ'վերցնեմ... Թերեւս Աստուած կ'ողորմէ մեզ...

Նիկոլայը յաղթանակում էր.

— Դէ՛հ, խմե՛նք, — ասաց նա.

— Խմե՛նք, — պատասխանեց Իվանը:

— Կենացդ.

— Ո՛ղջ լինիս...

— Դու էլ խմի՛ր Խրիստինա.

— Խրիստինան վերցրեց բաժակը իւր չորացած ձեռքերով և, կէսը խմելով, վայր դրեց:

— Դու էլ խմի՛ր Անտօն, — ասաց Նիկոլայը:

Անտօնը պարզեց ձեռքը բաժակը վերցնելու:

— Մի համարձակուի՛ր խմել. — գոչեց Խրիստինան և մի վայրկենում յայտնուեցաւ որդու առաջ, կարծես նրան իւր կրծքով պաշտպանում էր թրչնա՛մու գնդակներից:

— Թոյլ տու՛ր, մայրի՛կ, — ասաց Անտօնը, փորձելով հեռացնել մօրը:

— Մի՛ համարձակուի՛ր, — կրկնեց նա և այնպէս նայեց վրան, որ Անտօնը՝ զլուխը կախ՝ հեռացաւ սեղանի մօտից:

— Ինքս չեմ խմել, նրանց էլ թոյլ չեմ տայ, — աւելացրեց Խրիստինան՝ դիմելով աղամարդկանց. — ասենք, նրանք իրենք էլ խմողներիցը չեն... և, բացի այդ, յարգում են մօր խօսքը...

Խրիստինան չէր սխալւում. Անտօնը ո՛չ միայն լսեց մօրը, այլ, մինչև անգամ, աչքերը վայր թողած, կանգնել էր և չէր համարձակւում նայել նրա երեսին:

— Ես նրանց հարբեցողութեան ու չարագործութեան համար չեմ մեծացրել... աչքիս լոյսի պէս պահել-պահպանել եմ ամեն չարից, փորձանքից և մանկութիւնից աշխատանքի ու հնազանդութեան եմ սովորեցրել... Նրանք տեսնում էին, ինչպէս ես ինքս աշխատում էի իրենց համար՝ զրկուած Աստուծոյ աշխարհից, խղճում էին ինձ և լսում խօսքիս...

Վերջապէս Նիկոլայը վերկացաւ և «Մնաք բարեւ» ասաց Իվանին՝ զրկելով ու համբուրելով նրա երկու թշերից...

Մի քանի րոպէից խրճթում տիրեց լռութիւն ու խաւար: Միայն փոքրիկ սենեակում ինչ որ ճրագ էր վառվում և մի խուլ շշուկ լսվում... Խրիստինան նստած էր գետնի վրա՝ բաց սնդուկի առաջ. նրա ետեւը՝ ճրագը ձեռքին՝ կանգնած էր Անտօնը: Պառաւը արագ-արագ շուռ ու մուռ տուեց

սնդուկում դարսած շորերը, ձեռքը տարաւ մինչև յառակը և այնտեղեց Հանեց մի ինչ որ երկարաւուն առարկայ, որ նման էր բերանը պինդ փակած տոպրակի: Դա մի ինչ որ բանով լեբը գուլպայ էր: Խորիստինան բաց արեց նրա պինդ փակած բերանը, ձեռքը կոխեց ներս և ամենից առաջ Հանեց այնտեղեց 1—3 ռուբլանոց թուղթ փողեր, յետոյ՝ 10, 15, 20 կուպէկանոց արծաթ փողեր և ապա՝ փոքր քանակութեամբ պղնձէ դրամներ: Ակնյայտ էր, որ նա այդ գուլպայի մէջ էր պահում իւր ամբողջ աշխատանքը... Գանի, քանի՜ անգամ նա իւր զաւակների հետ յամաք Հացով էր անցկացրել օրը, դեանախնձորով կերակրուել, քանի քանի անգամ նա յետ էր գցել իւր աշխատած կուպէկները, պահել այդ գուլպայի մէջ. և այդ ամենը նա կատարել էր քսան տարի շարունակ:

Մայր ու որդի ընդհանուր ոյժերով համարեցին մինչև հարիւր ռուբլի: Խորիստինան, համրածը ձեռքին բռնած, նայեց որդու աչքերին.

— Դա Թիլիպի փողն է, — ասաց նա:

— Գիտեմ, — գլխով արեց Անտօնը:

— Ես քեզ չեմ զրկի, բո՛ւ փողերին չեմ զիպչի:

— Ինձ ի՞նչ... շարժեց նա ձեռքը:

Բայց այնուամենայնիւ Անտօնը հետաքրքրութեամբ նայում էր գուլպայի մէջ: Թէպէտ նա՝ մօրը յարգելով՝ մի տեսակ կեղծ անտարբերութիւն էր ցոյց տալիս, բայց ակնյայտ էր, որ իրա համար նշանակուած փողերը շատ հետաքրքրում էին նրան:

Խորիստինան մի ձեռքով թուղթ փողերն էր

բռնել, միւսը ծնոտին դրել և այդպէս անշարժ նստած էր: Մի գուցէ այժմ նա էլ, ինչպէս մի ժամ առաջ Իվանը, կասկածանքի մէջ էր, թէ փողերը կծախսի, բայց դործը չի շինուել: Սակայն յիշեց նա Նիկօլայի խօսքերը. — կաշիս ցրտից ամբողջովին արաք-արաք էր զալիս և աղիքներս փորումն սառչում էին, վեց ամիս շարունակ դեղին տենդը իմ հոգիս հանում էր: — Տէ՛ր Աստուած... մրհնջաց նա և՛ իսկոյն թագցնելով գուլպան սնդուկի մէջ, իսկ վերցրած փողերը ծոցումը՝ յած ձայնով աւելացրեց.

— Գուցէ Աստուած կ'ողորմէ և չար մարդկանց ձեռքը չի գցի ինձ:

Նա փակեց սնդուկը, դարձաւ խրճիթ և, վառարանի վրա բարձրանալով, շուտով քնեց:

Դ

Աիրակի օր էր. լոյսը՝ կապտին տալով պատուհանի ապակիների վրա՝ հեռզհեռէ սկսում էր ներս թափանցել խրճիթը: Աքաղաղները բակում և վառարանի տակ բարձրացրել էին իրենց ծուղրուղուն: Պատի ետեւից լսուեց Մաովէյի կնոջ ձայնը. դա ամբողջ ագարակի կանանցից ամենաչարն էր: Երեխաները ուրախ-ուրախ խաղում էին բակում: Բանուորները հեռզհեռէ վեր էին կենում և, իրենց կիսամաշ մուշտակները հագնելով, գնում աշխատանքի: Ծուխը թանձր քուլաներով բարձրանում էր ծխնելոյզներից և, քամուց հալածուելով, տարածվում օդի մէջ: Բակում այստեղ-այնտեղ աչքի

էին ընկնում բանուորները՝ խոտի մեծ կապոյտները շալակներին: Կանայք նոյնպէս աշխատում էին. նրանք վառարանների առաջ կերակուր էին եփում և միեւնոյն ժամանակ լուանում, սանրում ու մաքուր շորեր հաղցնում երեսաներին:

Իվանը և Խրիստինան, — հէնց որ առաջինը վերջացրեց իւր առաւօտուայ պարտադիր աշխատանքը, — դնացին Միլեվօի պանդոկատունը, որը Վօլկայից մի վերստ հեռաւորութեան վրա էր: Այդ պանդոկը գտնւում էր Միլեվօ կոչուած մեծ զիւղի գլխին և շատ նման էր մեծ ծանապարհների վրա եղող պանդոկներին: Նա մի կողմից բաղկացած էր մեծ, ընդարձակ խրճիթից, իսկ միւս կողմից՝ մեծ, երկար ու մուխ ախոռատնից: Խրճիթում կային մի քանի նստարաններ ու սեղաններ. բոլոր պատերը և առաստաղը ածուխի պէս սևացած էին ու ճաքճքուած. իսկ կաւէ յատակը սաստիկ խորդուբորդ:

Պանդոկում մեծ բաղնիթիւն կար և ահագին աղմուկ էր բարձրացել: Միլեվօի բոլոր զիւղացիները այդ առաւօտ հաւաքուել էին բանակցելու իրենց փաստաբանի հետ, որը, երկու տարի է, վարում էր նրանց դատը: Իմանալով Նիկօլայից փաստաբանի գալուստը, նրանք բոլորը եկել էին ներկայ գտնուելու: Այժմ բանը նրանումն էր, որ այդ զիւղացիները պէտք է էլի մի 400—500 մանէթ տային փաստաբանին: Եթէ այդ փողերը կտան, մօտիկ ապագայում նրանք կարող են դործը տանել, հաւաքակ դէպքում փաստաբանը ազատ է համարում

իրեն պատասխանատու թիւնից. — այդպէս էր ասել նրանց Նիկօլայը: Մէկ չէ՛ր, երկու չէ՛ր, այդպիսի ժողովներ շատ էին եղել. փողը հօսում էր զիւղացիների զրպաններից ինչպէս մի լայնատարած դեռ, որ սկիզբն է առնում մի փոքրիկ աղբիւրից: Ամեն տեսակ զուամրներ՝ երեսուն մանէթից սկսած մինչև երեք հարիւր մանէթը՝ Միլեվօի զիւղացիները միշտ տալիս էին: Վերջը միայն, երբ այդ դործի համար ծախսած փողը ահագին քանակութեան հասաւ, նրանք սկսեցին ափսոսալ: Տուածը չկորցնելու համար, Նիկօլայի խորհրդով, հարկաւոր էր էլի մի հինգ հարիւր մանէթ հաւաքել և այդ վերջինը պէտք է լինէր, ինչպէս «ճայրմեր»-ի վերջին «ամեն»-ը: Դեռ երեկուանից նրանք խորհրդակցում էին այդ հարցի մասին. — ամեն հաւատարմատարին պահանջած զուամրը, թէ չէ: Վճռեցին չտալ: Դրա հետեանքը եղաւ այն, որ փաստաբանը կատաղած հեռացաւ: Դիւղացիները վախեցան: «Փողերն էլ կորան, դործն էլ կորաւ...» — ասում էին մի քանիսը: Բայց Նիկօլայը մխիթարեց նրանց՝ ասելով, որ դեռ կարող են ուղղել իրենց սխալը՝ տեսնուելով փաստաբանի հետ Լեանոյից վերադառնալիս:

Իվանը և Խրիստինան՝ պանդոկը մտնելով նստեցին նստարաններից մէկի վրա: Բոլոր զիւղացիները հագներին ունէին նոր մուշտակներ և նոր կօշիկներ. դա ապացոյց էր նրանց ունեւորութեան: Նրանցից մի քանիսը նստոտած էին սեղանների շուրջը, մի քանիսն էլ՝ խմբուած խրճիթի մէջ սեղը՝ լսում

էին Նիկողայի խօսակցութեանը հարուստ զիւղացի-
ների հետ: Ամբողջ կէս ժամ է, սա պնդում էր, որ
զիւղացիները միմիայն իրեն ու իրեն են պարտա-
կան իրենց ներկայ խելքով:

Այդ միջոցին լսուեց մօտեցող կառքի դռնաբաններ:

— Նիկողայ, Նիկողայ, ձայն տուեցին տեղ-տեղեցի:

Նիկողայը վեր թռաւ և վազեց դէպի դուռը,
ուր խմբուեցին շուտով: և զիւղացիները:

Նրկու չաղ ձիաներ լծած կառքը կանգ առաւ
դռան առաջ: Նրա մէջ բաղմամբ կապրովսկին, ա-
ռանց ուշադրութիւն դարձնելու զիւղացիների վրա,
սկսեց խօսել Նիկողայի հետ:

Գիւղացիները աղերսում էին փաստաբանին,
որ նա իջնի կառքից և մտնի պանդոկը:

— Ձերդ գերազնւութիւն, ձայն տուեց Իվա-
նի բեռի Պաւելը, — մի՛ ըրպէով ցած իջէ՛ք... խօսք
ունենք...

— Մի ըրպէ միայն... վախով խելով կրկնում էին
միւսները:

— Մի՛ բարկացէք մեր յիմարութեան վրա, աչ-
քից մի՛ զցէք մեզ, — ասում էր՝ խոր դուրս տալով՝
Իվանի քեռին:

Վերջապէս կապրովսկին բաց արեց բերանը.

— Ընկերներ... եթէ դուք ինձ չէք հաւատում
և, ինչպէս երեկ ասացիք, չէք կարող այլ ևս
այդ գործի համար փող ծախսել, արէ՛ք, ինչ-
պէս կամենում էք... Գնացէ՛ք ուրիշ փաստաբանի
մօտ, նա գուցէ ձրի կվերցնի ձեր գործը... միայն
ուղարկեցէ՛ք նրան ինձ մօտ՝ թղթերը վերցնելու:

Նա այդ ասում էր սառնասրտութեամբ և
միւսնոյն ժամանակ մտածում:

— Դէ՛հ, տեսնենք, ի՞նչպէս նրանք կ'երթան:

— Դէ՛հ, դուք էլ ներեցէ՛ք նրանց, — խօսեց Նի-
կողայը, — ազէս ժողովուրդ է... ոչինչ չի հասկա-
նում...

— Յաճ իջէք կառքից և մտէ՛ք պանդոկը, —
ասաց Պաւելը, — մենք փողը բերել ենք... մեր հո-
ղը ոչ մի կերպ չենք զննանի Դեյսկինին... որ մե՛ռ-
նենք էլ, չենք տալ...

— Դէ՛ թող այդպէս լինի, — ասաց փաստաբա-
նը՝ իջնելով կառքից, — միայն Նիկողային յարգելով
եմ ես կատարում ձեր խնդիրը:

Գիւղացիները քիչ էր քնացել ձեռքերի վրա
տանէին փաստաբանին ներս: Նրանք բոլորը սկսե-
ցին միանգամից խօսել, այնպէս, որ ոչ մի բան չէր
կարելի լսել կամ հասկանալ:

Կապրովսկին ինքն էլ այդ աղմուկից ու իրա-
րանցումից շփոթուեց և չգիտէր ի՞նչ անէր կամ
ի՞նչ պատասխանէր: Բարեբաղդաբար յանձին Նի-
կողայի, նա ունէր մի շատ լաւ օգնական... ձիւնն
ասած, եթէ դա չլինէր, միլեփացիները իսկի չէին
էլ իմանայ փաստաբանի գոյութիւնը և նոյն իսկ
չէին էլ սկսի այդ գործը: Նիկողայն էր զարթեցրել
այդ խնդիրը և կապրովսկու համար ճանապարհ
հարթել:

Չէնց որ փաստաբանը նստեց սեղանի ծայրին,
Պաւելը ձեռքը կոխեց ծոցը և այնտեղեց հանեց մի
կապոց փող: Մնացածները հետեւեցին նրա օրինա-

կին և շուտով սեղանի վրա պարզուեցին տասնեակ ձեռքեր, որոնք շարտում էին թուղթ փողեր: Կապրովսկին արագ-արագ հաւաքում էր և բարձրաձայն համարում: Գիւղացիները ուշադրութեամբ լսում էին, ինչպէս նա, փոքր ինչ մրմնջալուց յետոյ, ինքն իրեն որոշակի արտասանում էր. «Հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր...»

Պանդոկի խորքում երևում էր հրէայ պանդոկապետի շեկահեր գլուխը, որը բթի տակ ծիծաղում էր և հանգիստ սրտով սպասում ընդհանուր արբեցողութեան ժամին...

— Հինգ հարիւր, — ձայն տուեց փաստաբանը՝ վերջացնելով համարելը և տեղեց բարձրանալով՝ սկսեց խօսել: Նա արագ ու բարձր էր խօսում: Խօսում էր փետրուարի 19-ի հրովարտակի, գիւղական զործերի մասնաժողովների, խօսում էր պալատի, Սենատի և այլ զանազան ազատամիտ զործերի մասին ու միևնոյն ժամանակ ապացոյցներ բերում օրէնքներից:

Գիւղացիների բերանը զարմացրից այնպէս էր բաց մնացել, որ ճնձղուկները կարող էին ազատ մուտք գործել այնտեղ: Երբեմն-երբեմն նրանք նայում էին իրար երեսին և ժպտում: Դա արդէն ապացոյց էր, որ շատ բաւական էին փաստաբանի ճառից:

— Եւ ի՞նչպէս խելօք է... Սողոմոնն է էլի, — ասում էին նրանք:

Վերջապէս փաստաբանը վերջացրեց իւր խօսքը (թէպէտ գիւղացիները հազիւ խօսածի մի տա-

սերորդ մասը հասկացած լինէին) և սկսեց «մնաք բարեւ» ասել:

— Ողջ եղէք ընկերներս, — ասաց նա՝ գլխարկը դնելով: Գիւղացիները պատկառանքով ճանապարհ բաց արին: Այդ ընդհանուր մի անկիւնից դուրս եկան Խրիստինան և Իվանը, որոնք ամբողջ ժամանակ նստած էին այնտեղ: Նիկոլայը բռնեց Կապրովսկու թեկից և նրա ականջին մի երկու խօսք փսփաց: Փաստաբանը մոռցուեց: Նա ըստ երեւոյթին անբաւական էր, որ իրեն ուշացնում են: Սակայն Նիկոլայը խսկոյն Խրիստինային և Իվանին ներս կոխեց պանդոկապետի սենեակը, ուր և մտցրեց յետոյ փաստաբանին, իսկ ինքը մնաց դուրսը և փակեց դուռը, որ ոչ ոք չյանդգնի ներս մանել:

Խնդրատունները այժմ դէմ առ դէմ էին փաստաբանի հետ: Իվանը, շնորհիւ երեկուանից նրա մէջ դէպի քեռին ծագած ատելութեանը, իրեն բաւականին ազատ և համարձակ էր պահում: Երկու օր սրանից առաջ նա համարեա ընկերաբար էր խօսում Պաւելի հետ, որովհետեւ համոզուած չէր, թէ ո՞րն է նրանցից արդարը և ո՞րը մեղաւորը: Պաւելը իւր կողմից նոյնպէս ոխ չէր պահում՝ դէպի նա. բայց այսօր ամեն բան փոխուեց: Այսօր իւր անկիւնում նստած՝ նա թշնամական հայեացքներ էր նետում դէպի Իւանը...

Խրիստինան բոլորովին կորցրել էր իրեն: Ձեռքերը կրծքին ծալած և արտասուածքով աչքերը փաստաբանին ուղղած՝ նա, համարեա հեկեկալով, սկսեց իւր խօսքը:

— Զե՛րդ պայծառափայլութիւն, ես անբաղդ ծնունդ եմ... —

— Ես, Զե՛րդ պայծառափայլութիւն, իմ դործս էլ կպատմեմ, նրանն էլ, — սկսեց Իվանը՝ առաջ դալով և Խրիստինային յետ հրելով:

Խրիստինան վախենալով, որ Իվանը բոլորը սխալ-միտ կպատմի և դրանով կմեասի իւր որդուն, ինքն էլ յետև հրեց նրան և շարունակեց ասելէքը:

— Քսան տարի որդիներիս մեծացրել եմ, պաս եմ պահել, բոբիկ եմ ման եկել...

Իվանը նորից հրեց նրան.

— Խնդրում եմ ի՛նձ լսեցէ՛ք, ի՛նձ... կնիկ է, նրանից ի՛նչ պէտք է հասկանաք...

Բայց այդ կնիկը նորից մի կողմը ձգեց Իվանին և շարունակեց.

— Նա այնպէս նիհար էր, թոյլ, ծնած օրից այդպէս էր. յետոյ էլ տենդը նորից վեց ամիս անկողին ձգեց նրան...

— Կինը խօսի՝ բամին փշի — մէկ է, — ասաց Իվանը, — դուք ի՛նձ լսեցէ՛ք...

— Զայնդ... մի՛ հաջիր... — դռնէ Խրիստինան՝ յարձակուելով Իվանի վրա. — երբ նա ծնունդ, կանայք ասում էին, որ իսկի երեք օր էլ չի ապրի... բայց չէ... կենդանի մնաց, մեծացաւ... զրել-կարգալ սովորեց... այնպէս քնքուշ էր, նուրբ, քաղաքավարի...

Վերջ 'ի վերջոյ բանը նրանով վերջացաւ, որ Իվանը սկսեց պատմել պառաւի դործը: Խրիստին-

նան կանգնած էր նրա յետևը և՛ հեկեկալով՝ երբեմն-երբեմն աւելացնում էր իւր նկատողութիւնները: Իվանը ազատ, մանրամասն և հետևողաբար պատմեց Կապրովսկուն իւր դործն էլ, նրա դործն էլ:

Իրանից յետոյ, այդ երկու խնդրատունների ծոցից դուրս դալով՝ փաստարանի դրպանը անցան երկու կապոց արիւն քրտինքով աշխատած թուղթ փողեր... Կապրովսկին, խոստանալով երկուսի էլ խնդիրը կատարել, կանչեց Նիկոլային, խօսեց նրա հետ, տուեց նրան ստացած փողերի մի մասը և դնաց:

Նիկոլայը, ագահաբար դրպանը կոխելով իւր բաժինը, մտաւ պանդոկը, որը լցուած էր ոգիւնից խմիչքների շոգիով: Իրար հետ կռուող զիւղացիների աղմուկը բռնել էր ամբողջ խրճիթը:

Իվանը նոյնպէս յանկանում էր խմել, բայց որովհետև հեար աւելորդ փող չէր վերցրել, ուստի և օղին ապառիկ պահանջեց, (որ երբէք չէր արել) և մի լաւ խմելուց յետոյ՝ սկսեց կռուել Պաւելի ու նրա երկու որդիների հետ: Պաւելը, բանի էութիւնը հասկանալով, սկսեց իւր իրաւունքները պաշտպանել. ներկայ եղողների մէջ ևս զանուեցան պաշտպաններ — մի քանիսը Պաւելի կողմն էին, միւսները՝ Իվանի, որը արդէն սկսել էր հայհոյել հօրեղբօրը:

Այդ միջոցին Խրիստինան վաղէվազ շտապում էր տուն: Նա այնպէս էր կարծում, թէ փաստաբանին փող տալով, որդու դործը զուլս բերեց վերջացրեց և ինքն էլ ազատուեց զանազան նո-

րանոր հոգսերից ու չարչարանքներից: Նա կարծես ջահելացել էր. երեսը կարմրատակել էր և աչքերը վառվում էին նախկին երիտասարդական փայլով:

— Հը, ի՞նչ կայ... խեր լինի... — հարցրեց Իվանի հղի կինը՝ ձեղինէն:

Խրիստինան ուրախութիւնից փայլող դէմքով նստեց նրա մօտ՝ յատակի վրա և սկսեց պատմել.

— Շատ լաւ մարդ է, ականաւոր, խելօք և հարուստ. նա քաղաքում առաջին փաստաբանն է... Խոստացաւ ազատել իմ Ֆիլիպիս... նա ծանօթ է այն գնդի ղեկներալի հետ, ուր որդիս է ծառայում: Խոստացաւ խօսել նրա հետ և խնդրել, որ Ֆիլիպիս ուրիշ գունդ տեղափոխէ և այստեղ թողնէ... Իսկ եթէ, ասում է, ղեկներալը չի համաձայնի, ես խնդիր կտամ ղեկնորական մինիստրին և քո որդուդ չեն ուղարկի այնտեղ, ուր ցրտից մարդու կաշին տրաք-տրաք է գալիս...

Այդ բոլորը պատմելիս՝ նա ուրախ, ղուարթ ծիծաղում էր:

— Իսկ ի՞նչ ասաց նա Իվանին. — հարցրեց ձեղինէն:

— Նոյնպէս խոստացաւ... անպատճառ կխլեմ — ասում է, — նրանից հողը:

— Փնօք քեզ Աստուած, — խաչակներեց ձեղինէն, — իսկ ո՞ւր է Իվանը.

— Մնաց պանդոկում միլեվացի գիւղացիների հետ:

Այդ բոպէին դուռը բացուեց և ներս մտաւ Անտօնը՝ նոր շորերը ու նոր կօշիկները հագին,

նոր զլխարկն էլ զլխին: Նա եկեղեցուց էր գալիս. Խրիստինան ուրախ-ուրախ վաղեց նրա առաջ՝ ասելով.

— Փրկեցի, փրկեցի՝ Ֆիլիպիս, փրկեցի քո թանկագին եղբօրը:

Երիտասարդը սրտանց ուրախացաւ այդ լուրի վրա և ուտելու բան ուզեց: Ճաշի ժամանակ էր, բայց այս անգամ ստիպուած էին առանց Իվանին ճաշելու: Նա երեկոյան դէմ վերադարձաւ տուն բոլորովին հարբած: Կինը շատ զարմացաւ այդ բանի վրա.

— Այդ ի՞նչ է պատահել զրան... երբէք այդպիսի բան չի արել — ասաց նա և, փոքր ինչ լռելուց յետոյ, աւելացրեց, — տսնք, ի՞նչ մի զարմանալու բան է, եթէ տղամարդը տարէնր մի անգամ հարբի, մանաւանդ մի այնպիսի օր, երբ կարող է նրա բաղդը վճռուել:

Եւ ձեղինէն չբարկացաւ Իվանի վրա:

Ե

Երկու ամսից աւել էր անցել այն օրից, երբ Կապրովսկին այցելեց Լեսնոյը և Միլեվօն: Երեկոյ էր: Ամառնային փոշու խիտ սիւնակները բարձրացել էին մի կողմից գիւղի և միւս կողմից ագարակի վրա: Տնձուորները՝ սպիտակ շապիկները հագներին՝ վերագառնում էին արօտատեղիներից: Նրանց գերանդիները փայլում էին մայր մոնող արեգակի վերջին ճառագայթների տակ: Տնձուորների յետեւից լսում

էր փոցխող կանանց բարձրաձայն ծիծաղը: Դրանք բոլորն էլ միլեացի վարձկան գեղճկուհիներ էին, որոնք Նիկիոլայի խրճիթի մօտովը գնում էին Վօլ'կա՝ իրենց վարձը ստանալու: Բոլորն էլ ջահել աղջիկներ ու կանայք. ոտքերը բոբիկ, դէմքերը արեակէզ, պարանոցները նոյնպէս, բայց զարդարուած ապակեայ ուլունքներով և կօրայններով: Հագներին ունէին հասարակ շապիկներ և տանը կարովի շրջագոյններ: Թուով մօտ երեսուն հոգի էին. բոլորն էլ բարձրահասակ, վայելչակազմ և ձկուն: Խմբուած ընթանալով ճանապարհը՝ նրանք, ձայները զլուխը դցած, մի ինչ որ միապաղաղ զիւղական երգ էին երգում: Երբ հասան Նիկիոլայի խրճիթին, յանկարծ ընդհատեցին երգը և խմբովին արտասանեցին:

— Բարի երեկոյ, Նիկիոլայ ամի՛.

— Աստուծոյ բարին որդիքս, — պատասխանեց նրանց ծերունի զինուորը, որ նստած էր իւր խրճիթի առաջ՝ հողաթմբի վրա: Նա, մի արագ հայեացք ձգելով կանանց վրա՝ նրանց ետեւում նկատեց մի կին, որը դեռ չէր հասել խրճիթին: Այդ կինը ոչ երգում էր և ոչ էլ մնացածների պէս ուրախ ու զուարթ էր: Նա դալիս էր ծանրաքայլ, մտաղբաղ ու զլխակոր:

— Խրիստինա, — ձայն տուեց նրան Նիկիոլայը:

Փոցխող կանայք՝ հեռանալով խրճիթից՝ շարունակեցին իրենց ճանապարհը: Պառաւր կանգ առաւ Նիկիոլայի առաջ. սա անթարթ նայում էր նրան:

— Ի՞նչ ես մեռածի պէս մանդալիս. — հարցրեց ծերունի զինուորը. — դու ինչի՞ չէիր երգում. դու էլ նրանց պէս կ'ուրախանայիր և աւելի կբացուէիր...

Խրիստինան շարժեց զլուխը և ձեռքը դրեց ծնոտին.

— Ա՛խ, Նիկիոլայ, Նիկիոլայ, — խօսեց նա, — մի՞թէ երգ է դալիս իմ աչքիս... Ինձ՝ պառաւիս էր մնացել երգել... Երգը նրա համար լաւ է, ով ամուսին ունի, իւր սեփական խրճիթը ունի... Իսկ ես, արդէն քսան տարի է, չեմ երգել... և եթէ երգել եմ, այն էլ իմ փոքրիկներիս կամ երբեմն էլ ուրիշ երեսանների համար քնի օրօր եմ ասել...

— Տարօրինակ կնիկ ես դու, — ասաց Նիկիոլայը:

Բայց Խրիստինան մի անգամ որ սկսել էր, անընդհատ շարունակում էր իւր խօսքը:

— Ես թագն ու պսակի կարօտ եմ մնացել, ուրիշների պէս լաւ չեմ ապրել, լաւ չեմ անցկացրել օրերս և նրանց պէս լաւ էլ չեմ մեռնի...

— Բաւական է, բաւական, — ընդհատեց նրա խօսքը Նիկիոլայը. — դու այն աստ, նորութիւն ցանկանում ես իմանալ... Այսօր ես փաստաբանից նամակ ստացայ...

Պառաւր վայրկենաբար փոխարկուեց. նա ուղղուեց, դէմքը կարմրեց, աչքերը վառուեցին.

— Գրե՛լէ. — բացականչեց նա. — ուրեմն Թիլիպիս մասին էլ է դրել... Ասացէ՛ք, ասացէ՛ք, ի՞նչ է լինելու իմ թանկագին որդուս վիճակը.

— Ի՞նչ պէտք է լինի... լաւ կ'լինի... նա այստեղ կ'մնայ և Միլեփօ կ'ուղարկեն ձմեռելու:

Խորիստինայի փողխը ձեռքից ընկաւ զետին. նա ուրախաձայն աղաղակներով յարձակուեց ծերուկի վրա և զրկեց նրան.

— Դէ՛հ, արի ու... այ ինչ կ'նշանակի կ'նի՛կ, միթարուեց՝ պրծաւ արդէն. — ասաց Նիկօլայը, ազատուելով նրա զրկից. — դեռ սպասի՛ր... վճիռը դեռ ստորագրուած չէ...

Ստորագրուած չէ, — կրկնեց պառաւը՝ ձգելով Նիկօլայի վրա մի հարցական հայեացք:

— Գուցէ և վաղուց արդէն բոլորը վերջացած լինէր, եթէ մի անպիտան սպայ չխանդարէր զործը... Ձի՛ թողնում... Ի՞նչ պէտք է անես նրան: Ել մի՛ հարցրու, թէ քանի անգամ փաստաբանը գնացել նրա մօտ և աղաչանք-պաղատանք արել... Նա է՛լի իւր էշն է քշում... Ձեմ թոյլ տայ, — ասում է, — թող գնայ — ասում է, — այնտեղ, ուր նշանակուած է... Հօ իմ որդուս չեմ ուղարկելու — ասում է, — նրա տեղը, որ սառչի ցրտից: — Լսում ես... ահա՛ այդ է գրում ինձ փաստաբանը:

— Իսկ դու դեռ ասում էիր, թէ լաւ կ'լինի. — յանդիմանեց նրան Խորիստինան:

— Գուցէ և կ'լինի, եթէ դու կամենաս...

Այդ ասելով՝ Նիկօլայը բարձրացրեց աջ ձեռքը և խփեց ձախին: Պառաւը հասկացաւ այդ շարժումը...

— Ելի՞ փող, — հարցրեց նա:

— Հապա դու ի՞նչ էիր կարծում, կ'նի՛կ, մի՞թէ

իսկապէս կարծում էիր, որ այդպիսի ահագին քաղաքում, փաստաբան պան Պակրովսկու նման մեծատունը այդչափ մեծ գործը կարող է մի քանի չնչին կոպէկներով կատարել: Ձէ, շատ կ'լինէր... Բաւական չէ դեռ, որ նա աշխատել է և ծախսեր արել, այդ փողից նա, մինչև անգամ, իրեն հասանելիբ հինգ տոկոսն էլ դեռ չի վերցրել... Ձէ՞ որ, ուր էլ գնաս, ամեն տեղ փող է պէտք... Այս կառապանին տուր, այս դրօշմանշի, այս բժշկից վկայական ստանալու... Սրան տուեց... նրան տուեց... այդպիսով հարիւր մանէթը բոլորովին գնաց... Իսկ հիմա ի՞նչ պէտք է անես այդ սպային... Կարելի է բանը շինել, բայց դրա համար փող է պէտք... Թէ կտաս՝ լաւ, թէ չէ, բօ Ֆիլիպիդ կըշեն այնտեղ, ուր և ես եմ եղել... Կպառկի այնտեղ՝ հիւանդանոցում, երբ դեղին տենդը կրճնի նրան, մարմինը դուրս կտայ սիսեռի մեծութեամբ, ձեռքերը կփետանան, կարող է պատահել, որ ականջներն էլ նեխուեն... Դու կարծում ես, չեմ տեսել այդպիսի բաներ... շատ եմ տեսել... բոլորը տեսել եմ, բոլորը գիտեմ... Լաւ է, որ կարողանայ զիմանալ, եթէ չդիմացաւ — կմեռնի և նրա աճիւնը կթաղեն օտար հողի տակ... Միայն ազոաւները կկռկռան նրա դերեզմանի զլխին, իսկ դու երբէք չես տեսնի այդ դերեզմանը, որովհետեւ նա շատ հեռու է...

Խորիստինան կարծես քարացաւ տեղումը: Այդպէս մօտ մի րոպէ կանգնելուց յետ, նա սկսեց խօսել ինքն իրեն.

— Խեղճ որդեակս... նա այնպէս դուռնատ էր,

Թոյլ, հիւանդոտ, քնքուշ ու մեղմ, ինչպէս դառը...
Եթէ Անտօնը միշտ էլ չէր լսում խօսքիս, բայց
նա միշտ լսում էր... Յաճախ նա փաթաթուում էր
վզովս և ասում. մայրիկս, ես քեզ երբէք չեմ վի-
րաւորի. քո վիճակը առանց այն էլ դառն է... Նրա
աչիկները այնպէս կապոյտ էին, ինչպէս վուշի
ծաղիկները և թէպէտ նա Թոյլ էր, բայց դարձեալ
չինարի պէս աճել, երկարել էր: Եւ ահա՛, նրան զի-
նուոր վերցրին... Երբ ես դնացի մօտը՝ զօրա-
նոց, նա ծունկ չոքեց առաջս, և սկսեց համբու-
րել ոտքերս... Ա՛խ, իմ սիրունիկ որդեակս, իմ
արցունքներովս արբեցած զաւակս... ինչի՞ համար
են քեզ խլում ինձանից և ուղարկում հեռաւոր եր-
կիրներ...

Նիկօլայը կարծես չէր լսում նրա խօսքերը:

— Դէ՛հ, ինչպէս խմանում ես, այնպէս արա,
— ասաց նա, — դա իմ գործս չէ:

Խորիստինան բարձրացրեց փոցիսը և, դուլս
տալով, կամենում էր դնալ, բայց յանկարծ, կար-
ծես մի ինչ որ բան վճռելով, արտասանեց.

— Ե՞րբ է հարկաւոր փողը բերել...

— Երբ կամենում ես, — պատասխանեց ծերու-
կը կեղծ ահաճութեամբ. — փաստաբանի մօտ ծա-
ռայող աղան վաղը վերադառնալու է քաղաք:

— Դէ՛հ, ես էլ վաղը կգամ. քնաս բարե...

— Գնաս բարե:

Նիկօլայը քնաց մենակ. ձեռքերը ծալեց ծնկնե-
րին և ընկաւ մտածմունքի մէջ: Նա, երևի մէկին
սպասում էր, որովհետեւ անդադար ճանապարհին

էր նայում: Նրա համբերութիւնը վերջապէս պտա-
կուեց — խրճթի առաջով մէկը սայլով խոտ էր տա-
նում: Սայլի վրա նստած մարդը բարեկեց նրան:

— Ա՛, այդ դժու ես Իվան, — ձայն տուեց ծերուկը:

— Ես եմ, Նիկօլայ ամի՛:

— Եթէ ժամանակ կ'ունենաս, այսօր արի մօ-
տըս... շատ հարկաւոր բան կայ խօսելու... միայն
անպատճառ այսօր:

— Լա՛ւ, կգամ, — անվրդով պատասխանեց Իվանը:

Ժամանակը արդէն ուշ լինելով՝ Իվանը մըտ-
րակեց ձիանը և առաջուանից աւելի արագութեամբ
բշեց դէպի ագարակը:

Նիկօլայը նրա համար էր ամբողջ օրը նստած
մարդ որսում, որովհետեւ Կապրովսկին՝ ուղարկե-
լով նրա մօտ իւր ծառային՝ պատուիրել էր, իւր
համար գիւղացիներից փող ժողովի, որքան կարող
է նրանցից դուրս կորզել:

Իվանը՝ խոտը սայլեց ցած թափելով, իսկոյն
դնաց Նիկօլայի մօտ: Թէ ինչ խօսեցին նրանք այն-
տեղ, շատ հեշտ է գուշակել, միայն նա շուտով
վերադարձաւ տուն:

Երբ որ բոլորը վերջացրին ընթրիքը և երբ
Իվանը իւր կնոջ հետ պառկեց քնելու, Խրիստի-
նան և Անտօնը կամաց մօտն փոքրիկ սենեակը:
Հէնց նոյնպէս, ինչպէս երեք ամիս սրանից առաջ,
Խրիստինան նստեց յատակի վրա, բաց արեց սնդու-
կը, հանեց գուլպան և սկսեց համարել թուղթ ու
մանր փողերը: Անտօնը ճրագը ձեռքին լոյս էր ա-
նում գուլպայի միջին: Երբ որ մայրը մի կողմը

դրեց մի որոշ գումար և փաթաթեց զուլպան, նա անվճռողաբար հարցրեց.

— Իսկ մնացածը իմն է՞.

— Քոնն է, որդեակս, քոնն է:

Սյդ ասելով և փողերը սեղմելով ձեռքի մէջ, նա ընկաւ մտածմունքի տակ:

— Ահա, այս էլ քեզ քահանայով, խաչ ու խաչ վառով թաղում. — խօսում էր նա ինքն իրեն. — այս էլ քեզ գեղեցիկ դադաղ... գեղեցիկ, ներկուած խաչ գերեզմանիս վրա... Շան նման ապրեցի, շան նման էլ կթաղեն... Ա՛խ, Ֆիլիպ, Ֆիլիպ... Իմ սե օրուայ համար էի պահել այդ փողը, գերեզմանիս ու նրա վրայի խաչի համար. մտադիր էի դրանցով դէթ մասամբ ջնջել այն ամօթը ու դառնութիւնները, որոնց ենթակայ եմ եղել ամբողջ կեանքումս... բայց, Աստուած երեւի այդպէս կամեցաւ... Միրով եմ տալիս այս փողերը քեզ ազատելու համար, իմ անգի՛ն զաւակս...

Երկու խոշոր արցունքներ զորութեցին նրա աչքերից և ընկան ձեռքին բռնած փողերի վրա... Անտօնը, տեսնելով մօր դէմքի ակուր արտայայտութիւնը, ինքն էլ պատրաստ էր լաց լինելու, սակայն, զսպելով իրեն, ասաց.

— Բայց իմ փողերը, մայրի՛կ, չվերցնես... Թէկուզ հէնց ինչ էլ պատահելու լինի այնտեղ, դարձեալ մի՛ վերցրու... Հերիք է, ինչ որ տուեցիր Ֆիլիպին... Թող ինձ համար էլ զոնէ մի քիչ մնայ... չէ՞ որ ես էլ քո հարազատ զաւակն եմ... լսում ես մայրի՛կ.

Խրիստինան նայեց որդու վրա և դարմայաւ: Անտօնի աչքերը կրակի պէս վառուում էին. — այդպէս երբէք նա չէր տեսել որդու աչքերը. — ձայնը խռխուում էր.

— Անդինս, — պատասխանեց մայրը. — դուք երկուսդ էլ հաւատար էք ինձ համար. Ֆիլիպը ո՞րն է, դու ո՞րն ես... ձեր երկուսի վրա էլ հաւատար աշխատանք, չարչարանք եմ թափել, երկուսիդ էլ աչքիս լոյսի պէս խնամել եմ... միայն նա այժմ աւելի դժբաղդ է... Իդու այստեղ ես՝ իմ մօտ և, փառք Աստուծոյ, առողջ ու զուարթ ես, իսկ նա թոյլ է, հիւանդոտ և նրան կարող են ուղարկել այնպիսի տեղեր, ուր գեղին տենդը մաշում է մարդկանց և ցրտից աւանջներ են սառչում... Ահա, ինչի համար եմ ես տալիս նրան, ի՛ւր փողն էլ, ի՛մն էլ...

— Բայց իմիս ձեռք չտաս... եթէ կտաս ես մինչև մահս այդ բանը չեմ ների քեզ... Ճշմարիտ, չեմ ների...

— Ձե՛մ տայ, որդեակ, չե՛մ տայ... միայն վերցրածս կ'ուղարկեմ սպայի համար, որ նա ստորագրէ թուղթը և Ֆիլիպիս Միլեփ ուղարկեն ձմեռելու:

Միւս օրը՝ առաւօտեան Խրիստինան փողերը տարաւ Նիկօլայի մօտ: Ի վանը նոյնպէս, իւր գործին արագ ընթացք տալու համար, աւելացրեց մի զոյգ տասնոցներ և փաստաբանի ծառան վերադարձաւ քաղաք: Կապրովսկին խիստ գոհ մնաց Նիկօլայից, որ նրան յաջողել է հարիւրից աւելի դուրս կորզել:

Բայց դեռ երկու ամիս չէր անցել այդ դէպքից, երբ Նիկողայը նորից սկսեց այցելել ծանօթ խրճիթները: Նա շրջեց ամբողջ Միլեթին, և ամենից երկար խօսակցութիւն ունեցաւ Պաւելի հետ: Յետոյ պատահեց Իվանին, որ դաշտից սիւսեռ էր տանում: Ծերուկը կանգնացրեց նրան և ականջումը մի ինչ որ բան փափսաց այնպէս, որ յետեւից բանուորները չսեցին: Վերջապէս նա գնաց դաշտը, ուր կանայք սե յորէն էին հաւաքում: Այնտեղ նա երկար տեսակցութիւն ունեցաւ Խրիստինայի հետ և արդէն ուշ երեկոյեան դարձաւ տուն:

Եւ ահա, Խրիստինան կրկին վերադառնում է տուն Նիկողայի տան մօտով: Հասնելով խրճիթին, նա յիշեց ծերուկի այս օրուայ ասածը և սառնուած անցաւ ամբողջ մարմնովը: Նա մահը աւելի շուտ կսպասէր, քան այն, ինչ որ լսեց Նիկողայից:—Փող... էլի փող, այն էլ աւելի շատ. բոլորը, ինչ որ ունի-չունի և որքան կարող է ձեռք բերել: Եթէ ոչ և՛ Ֆիլիպը, և՛ մինչև այժմ տուած փողերը զուր կկորչեն: Երեք օրից յետոյ պէտք է վճռուի նրա բաղը: Համառ սպան համաձայնուել է, բայց այժմ նոր փորձանք... Ինչ որ զինուորական քննիչներ են եկել և փչացրել բոլոր գործը. իսկ առանց նրանց համաձայնութեան ոչինչ չի կարելի անել... Նրանք չեկած լինէին, ամեն բան վերջացած կլինէր... Փաստաբանը գրել է Նիկողային, որ եթէ Խրիստինան համաձայն է փող տալու, նա կխօսէ քննիչների հետ, իսկ եթէ չի տայ, թող էլ իրենից անբաւար-

կան չի ֆայ... ինքը մեղաւոր չէ, որ քննիչներ են եկել և լուանում է իւր ձեռքերը... Այլ ևս նա արդէն ոչ մի կերպ չէ կարող օգնել և իւր որդուն կ'ողարկեն սառնամանիքի ու հիւանդութիւնների աշխարհը:

—Աստուած իմ, խղճս ինձ թշուառիս.— մրմնջում էր Խրիստինան...

—Փող... ռոտեղից գտնեմ... Մնդուկի եղած փողը իմն չէ... Անտօնինն է... ինչի՞ համար ես զրկեմ նրան... չէ՞ որ նա էլ միւսի պէս իմ դաւակն է... Եթէ հէնց վերցնեմ էլ, Անտօնը կբարկանայ և երբէք չի ների ինձ արածս... նա ինքը հօսաց... Որդիքս ինձ սիրում էին, լսում, բայց այժմ, այսպէս թէ այնպէս, ես երկար չեմ տեսնի Ֆիլիպին, եթէ Անտօնն էլ կբարկանայ վրաս և հաւատար կկորցնի, էլ ի՞նչ է քնում ինձ... վերջին արեւս կխաւարի...

—Այսպէս էլ վառ է դուրս գալիս, այնպէս էլ վատ.— արտասանեց նա բարձրաձայն,— ի՞նչ անեմ ես... Թէ՞ խորհրդակցեմ մէկի հետ... Իվանը բարի մարդ է, բայց նա այնքան զիտէ, որքան և ես: Անտօնի հետ չի կարելի այդ մասին խօսել... Նա երբէք թոյլ չի տայ վերցնելու իւր փողը... Տէր Աստուած, մի կենդանի արտարած էլ չկայ, որ մի խորհուրդ տար թշուառիս: Միլեթցում ազգականներ ունիմ. բայց նրանցից ի՞նչ օգուտ... Բոլորն էլ երեսները դարձրել են ինձանից, մոռացել են և ճանաչել էլ չեն կամենում: Մի խօսքով՝ ոչ որ չունեմ, ոչ ոք...

—Աստուած իմ, խղճս ինձ մեղաւորիս,—

աւելացրեց նա՝ արագացնելով քայլերը:— Գնամ՝ Վիշինսկու մօտ... Ի՞նչ դուրս կգայ, նա էլ չի օգնի, կրկին դուրս կ'անէ... Բայց, թէ կարողանայի էլի փող ուղարկել, Ֆիլիպը հաւանօրէն ամբողջ ծառայութիւնը իւր տեղումը կ'անէր, և նրան չէին ուղարկի այնպիսի երկիրներ, ուր կատաղի ցրտերը և զանազան հիւանդութիւններն են թագաւորում:

Եւ Խրիստինային թւում էր, որ որդու դուստտ ուրուականը կանչում է նրան իւր մօտ, պարզում է դէպի նա աղերսալից իւր ձեռքերը և ասում. մայրի՛կ, եթէ կամենաս, կարող ես փրկել ինձ... Անտօնը առողջ է և ուժեղ. նա ինքն էլ կարող է փող աշխատել, իսկ ես ոչ ոյժ ունիմ, ոչ առողջութիւն, ոչ էլ փող. կըշեն ինձ աշխարհի ծայրը և այնտեղ կկորչեմ...

Պառաւր նստեց մի քարի վրա. ոտքերը յոգնած էին և նա անկարող էր շարունակել ճանապարհը:

Մութն ընկնում էր արդէն. աստղերը փայլեցին երկնքում: Սակայն Խրիստինան դեռ նստած՝ մտածում էր: Նրան թւում էր, որ որդին արդէն ճանապարհ է ընկնում դէպի օտարութիւն և հրաժեշտի ժամին յանդիմանում է իրեն. մայրի՛կ, չփրկեցիր ինձ՝ թշուառ որբուկիս... Ահա և ազնաւները սաւառնում են նրա լերկ ու անխաչ գերեմանի վրա. նրանք մի ամբողջ երամ են... և այնպէս չարագուշակ ձայնով են կռկռում, որ կարծես կամենում են զերեղմանը բանալ և կոցահարել իւր որդու դիակը...

Նա վեր թռաւ քարի վրայից.

— Ո՛չ—բացականչեց նա,— այդ չի՛ լինի... ինքրս կ'երթամ քաղաք, փաստաբանի ոտքերը կրնկնեմ և կխնդրեմ, որ նա տուած փողերովս բաւականանայ և, առանց նոր դումար պահանջելու, ազատէ իմ Ֆիլիպիս...

Այսօր նա լսեց, ինչպէս Պաւել Գողդաւման ասում էր մի ուրիշ զիւղացու, որ ինքը կէս զիշերից յետ քաղաք է գնալու՝ փաստաբանի հետ խօսելու... Նա ասաց, որ ոտքով է գնալու. այժմ՝ դաշտային աշխատանքի ժամանակ է և ձին տանը հարկաւոր է... Ինքն էլ դուրս կգայ ճանապարհ, կսպասէ Պաւելին և միասին կ'երթան փաստաբանի մօտ...

— Բայց վերցնե՛մ հետս փող, թէ՞ չվերցնեմ... Լաւ է չվերցնեմ, բայց յամենայն դէպս, կարելի է պէտք դայ...

Գիշերը, երբ արդէն բոլորը քնեցին, երբ Անտօնն էլ դռակի մէջ պինդ խրափում էր, Խրիստինան իջաւ վառարանի վրայից և զգուշութեամբ՝ զողի նման՝ անցաւ փոքրիկ սենեակը: Նոյնպիսի զգուշութեամբ բաց արեց սնդուկը, հանեց փողով զուլպան, վերցրեց և, առանց բանալու, դրեց ծոցը:

Արիւնը տուեց նրա գլուխը և ձեռքերը դողացին, երբ իւր սեփական սնդուկից զողացաւ Անտօնին խոստացած փողերը: Նա երբէք իւր կեանքում բան չէր զողացել և այժմ թւում էր, որ կողոպտում է իւր վերջին հարազատ որդուն:

— Աստուած իմ, զթա՛ ինձ մեղաւորաբար,— մրմնջաց նա՝ դուրս դալով սենեակից:

Առաւօտեան՝ մօտ տասնութիւն ժամին Կապրովսկու ընդունարանում բաղմաթիւ ժողովուրդ էր հաւաքուել: Բոլորը սպասում էին նրա արթնանալուն, որ հերթով կանչէր իրենց առանձնասենեակը: Անկիւնում՝ մի աթոռի վրա նստած էր Պաւել Գողգավան, երկար բաճկոնը և նոր կօշիկները հագին: Մորթէ գտակը ձեռքին բռնած՝ նա իւր ալեւոր դուխը թեքել էր կրծքին: Զէր հասկացուում, մտածում էր, թէ ննջում: Պաւելի և դռների միջև՝ պատին դէմ ընկած՝ կանգնած էր Խրիստինան: Նրա դուխը փաթաթած էր կարմիր չթի թաշկինակով, կարճ դերիայի տակից երևում էին կոպիտ և անձոռնի կօշիկները: Տասնհինգ տարի է, որ Խրիստինան գործ էր անում այդ կօշիկները՝ հագնելով միայն քաղաքում կամ եկեղեցի գնալիս: Շարունակ մի ոտքից միւսը փոխուելով, նա մեծ անհամբերութեամբ սպասում էր իւր հերթին:

Կապրովսկու առանձնասենեակ մտնողները կարծես եկեղեցի էին մտնում-հանդարտ, զգուշութեամբ: Մինչև անգամ Գողգավան, որը, իբրև զիւղացիների պատգամաւոր, մի քանի անգամ եղել էր Կապրովսկու մօտ, նոյն իսկ նա էլ համեստութեամբ և երկիւղածութեամբ կանգնեց դռան մօտ: Բայց Խրիստինան այս անգամ ցոյց տուեց մի անսպասելի քաջութիւն: Ներս մտնելով առանձնասենեակի շէմքից՝ նա, առանց քաշուելու, մօտեցաւ փառաբանին, ծունկ չօքեց և պինդ գրկեց նրա ոտքերը: Կապ-

րովսկին կամենում էր դուրս պրծնել, բայց, ոտքերը կապած մարդու պէս, միայն թէքուեց դէպի պառաւը: Խրիստինան բռնեց նրա ձեռքերը և սկսեց համբուրել:

— Թող, թող, պէտք չէ... — հեռացնում էր փառաբանը Խրիստինային. — ասա, ի՞նչ ես կամենում...

Կապրովսկին բարկութիւնից տրաքւում էր, նա չգիտէր, ո՞վ է իւր առաջ չոքածը: Ինչպէս երևում է, նա մոռացել էր այդ կնոջ խնդիրը և չճանաչեց նրան: Նիկոլայի միջոցով վարելով իւր գործերը՝ նա յաճախ չէր իմանում, ի՞նչ եղանակով է այդ մարդը զիւղացիներից փող ղջլում և ի՞նչ գործեր ինքը պարտաւոր էր վարելու: Նա մութ կերպով յիշում էր, որ մի ինչ որ կին խնդրել էր իր որդու համար, որը զինուոր պէտք է լինէր... բայց դուցէ՛ դա նա չէ... Նա խոժոռեց դէմքը և կրկնեց իւր հարցը:

— Ի՞նչ ես կամենում... ասա շուտով...

Խրիստինան վեր բարձրացաւ և սկսեց բացատրել...

— Ես եկել եմ ձեզ մօտ իմ Գիրիպիս համար... Լոյսը չբացուած էի եկել և կամենում էի տեսնուել որդուս հետ... բայց յետոյ վախենալով, որ դուցէ՛ չկարողանամ Ձեզ տեսնել, եկայ այստեղ և սպասում եմ...

— Դէ լաւ... բայց ինձանից ի՞նչ ես կամենում:

— Ես եկել իմ որդուս մասին...

— Վերջապէս ո՞ւր է նա՝ այդ քո որդիդ:

— Ո՞ւր պէտք է լինի, — հառաչելով պատաս-

խանեց պառաւը.— վերջին անգամ զօրանոցում տեսայ նրան... դունատ, շինելը հաղին... դուրս թռաւ սանդուխքների վրա, ընկաւ ոտքերս և բացականչեց.— Մայրի՛կ, ազատի՛ր ինձ... աշխատի՛ր, որ ինձ այստեղ թողնեն:

Կապրովսկին սկսեց յիշել.

— Ճէնց իմանաս դա այն կինն է, որը խընդրում էր իւր զինուոր որդու համար.— մտածեց նա:

— Ես եկել եմ ձեզ մօտ.— շարունակեց Խրիստինան.— Նիկոլայը ինձ ասաց. պարոն փաստաբանի համար փող տա՛ր, և նա կ'օգնէ քեզ՝ ազատելու Ֆիլիպիդ... Ես բերեցի առաջին անգամ Ֆիլիպիս համար պահած փողերը... Յետոյ նա պատմեց այն սպայի մասին, որը չէր համաձայնում թուղթը ստորագրել... Ես տուեցի նրան իմ փողերս, որը իմ սև օրուայ համար էի պահում, տուեցի, որ ուղարկէ ձեզ՝ սպային տալու... Եւ ինչպէ՞ս ուրախացաւ սիրտս, երբ Նիկոլայը ասաց, որ Ֆիլիպը կ'մնայ այստեղ և նրան Միլեփօ կ'ուղարկեն ձմեռը անցկացնելու:

Այժմ Կապրովսկին հասկացաւ բանի էութիւնը և ամբողջովին մտաբերեց այդ կնոջը: Նա կամենում էր ընդհատել զրա խօսքը, որպէս զի շուտով ազատուի, բայց կ'ինը դարձեալ շարունակում էր.

— Այժմ ես, Ձերդ պայծառափայլութիւն, եկել եմ իմանալու այդ քննիչների մասին... Ի՞նչ անեմ ես նրանց... դուք աշխատեցէ՛ք, որ այդ քննիչները չ'ուղարկեն իմ Ֆիլիպիս...

Կապրովսկին նորից մնաց շուարած.— Ի՞նչ քննիչների մասին է խօսում այդ կինը: Երեւի Նիկոլայը, ինչ հասնի, ասում է՝ կնոջը վախեցնելու և նրանից փող դուրս կորզելու համար:

— Ո՞վ է ասել քեզ այդ քննիչների մասին.— հարցրեց նա անհամբերութեամբ, որպէս զի խօսք դուրս քաշի Խրիստինայից:

— Նոյն Նիկոլայը... երեկ ասաց. «փաստաբանը ինձ գրում է, որ գործը այսպիսի դրութեան մէջ է»: Ես մտածեցի, մտածեցի... Ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ... վերջը վճռեցի զալ և եկայ...

— Իսկ Նիկոլայը ասա՞ց քեզ, որ փող է հարկաւոր.

Խրիստինան մինչև ոտքերը դուլխ խոնարհեց փաստաբանին և, ուղիղ աչքերին նայելով, դողդոջիւն ձայնով արտասանեց.

— Ձերդ պայծառափայլութիւն, Ազնուածնունդ Պան, ողորմած եղէ՛ք դէպի ինձ. այս անգամ անփող արէ՛ք... Ինչ որ ունէի, բոլորը արդէն տուել եմ. աղքատ կ'ին եմ. ո՞րտեղից գտնեմ:

— Նիկոլայը չ'ասա՞ց միթէ որքան և ինչի համար է հարկաւոր.— հարցրեց Կապրովսկին՝ յօնքերը կիտած:

— Ասաց, բոլորը ասաց... բայց խղճացէ՛ք ինձ և մի կերպ վերջացրէ՛ք այդ քննիչների բանը... անփող վերջացրէ՛ք...

Փաստաբանը սառած մնաց տեղը և, ուղղելով նրան իւր գոռոզ հայեացքը՝ սառնութեամբ արտասանեց.

— Ասա՛ ինձ, պատուելի բարեկամ, ես ի՞նչ եմ, Աստուած եմ—հա՛... —

— Ո՛հ...

— Դէ՛հ, որ Աստուած չեմ: դու էլ ի՞նչպէս ես յանկանում, որ ես կարողանամ առանց փող որեւէ դործ վատարել... Սիրելի՛ս, այս աշխարհում ամեն բան փողեց է կախուած... առանց փողի մարդըն էլ ոչինչ չ'արժէ, նրա դործն էլ...

Պաւել Գողգաթան այդ ամբողջ խօսակցութեան ժամանակ շէմքում կանգնած՝ ուշադրութեամբ լսում էր փաստաբանի ամեն մի խօսքը: Մէկ մէկ էլ շարժում էր զլուխը ու թեթեւ ժպտում: Խրիստիանան կանգնած էր, ինչպէս մի յանցաւոր դատաստանի առաջ և չէր համարձակուում նայել խօսակցի վրա: Երբ փաստաբանը վերջացրեց իւր տակելքը՝ պառաւը դիմեց նրան վերջին անգամ.

— Սղաչում եմ, ողորմած եղէ՛ք և ազատեցէ՛ք իմ Ֆիլիպիս... ես փող չ'ունեմ...

— Որ չ'ունես, սյստեղ դալու էլ կարիք չկար, — բարկացած ասաց Կապրովսկին, — իմ ժամանակս թանկ է, չեմ կարող քեզ հետ երկար խօսել. դնա՛ բանիդ, դէ՛, մտրշ...

Խրիստիանայի դէմքը մեռելի գոյն կարեց. նա վախեցաւ... փաստաբանը դուրս է անում իրեն... Իսկ եթէ դուրս է անում, — մտածեց նա. — ուրեմն ոչինչ էլ չի շինի և այն ժամանակ ի՞նչ կլինի Ֆիլիպիս դործը, ո՞ւր կմնան այն փողերը, որ արդէն տուել եմ...

Նա անզխտակցաբար բարձրացրեց ձեռքը դէ-

պի կուրծքը և շորի արանքից տարաւ ներս. կարծես կամենում էր մի ինչ որ բան հանել ծոցից: Բայց այդ ժամանակ յիշեց Անտօնին ու նրա խօսքերը. «եթէ կտաս, ես մինչև մահս չեմ ների քեզ այդ բանը»: Նա շուռ եկաւ դէպի Պաւելը և ձգեց նրա վրա մի յնորուած, աղերսալից հայեացք. կարծես հարցնում էր նրանից.

— Ի՞նչ անեմ. դու տղամարդ ես, աւելի խելօք ես, քան ես՝ յիմար կինս... խորհուրդ տու՛ր... օգնի՛ր...

Գողգաթան հասկացաւ այդ հայեացքի միտքը և, մօտենալով Խրիստիանային, սկսեց մի ինչ որ բան փսփոսալ նրա ականջին... «Միլեվօի դիւղացիները քեզանից էլ շատ են տուել և, եթէ հարկաւոր լինի, էլի կտան. առանց դրան չի կարելի...» Խրիստիանան լսում էր, սակայն տատանւում էր. կարծես մէկը բռնում էր նրա ձեռքից... Վերջապէս նա վճռեց ու, մէջքով շուռ դալով դէպի փաստաբանը, ծոցից հանեց դուլպան, բաց արեց նրա կապը, մօտեցաւ սեղանին և դուրս թափեց բոլոր մանր փողերը. դրանք զննդալով զորութեան թղթերի վրա:

Կապրովսկին ծիծաղեց.

— Այ թէ փող է հա՛. — բացականչեց նա. — ո՞րտեղից ես հաւաքել այդքան անպէտք բաներ... Հա՛, հա՛, հա՛:

Սեղանի վրա թափուած փողերը պարզ արտայայտում էին այդ կնոջ տխուր վիճակը. արտայայտում էին նրա թափած անվերջ արիւն-բըր-

տինքը, մշտական կռացած մէջքը, բոբիկ ոտքերը
և այլանդակուած ձեռքերը... Այն բոլորը, ինչ որ
բերել էր այժմ, բսան տարուայ դառն աշխատանքի
մնացորդն էր, մի աշխատանք, որ նա կատարել էր
անընդհատ գիշեր-ցերեկ. ոչ տօն էր խմացել, ոչ
լի օր...

Դէ՛հ, էլ ի՞նչ ես ուղում.—այժմ արդէն աւելի
բաղըրութեամբ հարցրեց Կապրովսկին:

—Հը, հիմա քննիչները որդուս էլ չե՞ն ուղար-
կի ցուրա նրկիրներ:

—Ձե՛ն ուղարկի, չե՛ն... Հանգստացի՛ր և գնա՛
տուն...

—Շնորհակալ եմ, շնորհակալ. թող Աստուած
վարձատրէ ձեզ դրա փոխարէն... Իսկ ես այլ ևս
չեմ ձանձրացնի ձեզ... Այժմ միայն կ'երթամ դօ-
րանոց՝ որդուս տեսնելու:

Կապրովսկին վեր թռաւ տեղից.

—Մի՛ համարձակուիր գնալ այնտեղ, այժմ
չի՛ կարելի նրան տեսնել...

—Ձե՛րդ պայծառափայլութիւն, ամենաողոր-
մած պարօն... թոյլ տուէ՛ք տեսնելու իմ որդուս...
դոնէ մի ըրալէ...

Նա ընկաւ փաստաբանի ոտքերը և ոչ միայն
զրկում էր, այլ և համբուրում նրա ծնկները. բայց
Կապրովսկին վճռողաբար պատասխանեց.

—Ձի՛ կարելի, սիրելի՛ս, չի՛ կարելի տեսնուել
որդուդ հետ... Նա այժմ հիւանդ է համար-
ւում և գտնուում է այնպիսի մի տեղ, ուր ոչ ոքի
չեն թողնում... Եթէ կամենում ես, որ մեր ամբողջ

գործը զուր տեղը չփչանայ, վերադարձի՛ր շուտով
տուն. այս ըրալէիս գնա՛ տուն և ոչ ոքի մի երեւա,
հասկացա՛ր...

Ինչպէ՞ս չհասկանար, երբ նա ոչ միայն ականջ-
ներով էր լսում, այլ և՛ աչքով և՛ ամբողջ մարմնով...
Ասածը պարզ էր. եթէ նա գնար, ամբողջ գործը
կփչանար...

—Շնորհակալ եմ,—ասաց նա հանդարտ,—ես
նրանից էլ դո՛հ եմ, որ դոնէ հանգիստ կվերադառ-
նամ տուն... միայն թէ այդ քննիչները ոչինչ չա-
նէին և Ֆիլիպիս ձմեռը Միլեվօ թողնէին:

Նա գլուխ տուեց և դուրս եկաւ տռանձնա-
սենեակից:

Սեղանին մօտեցաւ Պաւել Գոզլավան: Կապ-
րովսկին մի առանձին յարգանք էր տածում դէպի
այդ մարդը և շատ լաւ յիշում էր Միլեվօի դիւ-
ղացիների գործը: Դա առաջուանի պէս, մանր ու
արծաթ փողով վարձատրող որևէ կին չէր, այլ
մի հարուստ մարդ:

Փաստաբանը հանեց արկղից մի զրած թուղթ
և առաջարկեց նրան լսել այն խնդիրը, որ մտադիր
էր տալ դատարանին՝ նրանց գործի մասին...

Բայց Պաւելը չկամեցաւ լսել:

—Ինչ խնդրին է վերաբերում, դուք զեռ ժա-
մանակ կ'ունենաք այն կարդալու... Ես ձեզ մօտ
ուրիշ գործի համար եմ եկել... Խօսքս իմ եղբոր-
որդի Իվանի մասին է... Ինձ յայտնի է, որ դուք յան-
ձրն էք առել՝ վարել նրա գործը և եկել եմ
խնդրելու, որ իմ օգտին տանէք այդ դատը...

Գիւղացու փայլուն աչքերը կանդ առան փատաբանի դէմքի վրա. Պաւելը ձեռքը տարաւ ծոցը.

— Դուք ինքներդ ասացիր. — շարունակեց նա, — որ առանց փող մարդը միւսնոյն է, ինչ որ ցանկապատի փթած սիւնը, որի վրա չի կարելի հենուել... Այսպէս, թէ այնպէս նա փթած է, չի կարելի նեցուկ տալ նրան. նա շարունակ մի կողմ կ'էջքուի... Ահա, Իվանը Հէնց այդպիսի մի սիւնակ է, որին չարժէ նեցուկ տալ...

Կապրովսկին նստեց բազկաթոռի վրա և, իբր թէ հանաքով, ասաց.

— Դէհ, այդ այդպէս է, բայց դու շատ ես բերել: Տեսնենք, որի՞դ կողմը կարելի է բռնել, քո՞ թէ նրա...

Քառորդ ժամ անցած՝ Գողդավան դուրս եկաւ Կապրովսկու մօտից ուրախ և զոհ...

Խրիստինան արդէն քաղաքից դուրս էր: Երկու վերստ անցնելուց յետոյ նրա ճանապարհը փոխուում էր: Դէպի դիւղը տանող ուղին ընկած էր երկաթուղու դճերի միւս կողմը, ուստի և նա ստիպուած էր անցնել այդ դճերի վրայից: Բայց Հէնց այդ ժամանակն էլ անցնելու էր գնացքը: Պահապանը, տեսնելով կնոջը, ձայն տուեց նրան.

— Զի՛ կարելի...

Խրիստինան կանդ առաւ:

Անցարդելից մի քանի քայլ հեռու նա նստեց, հանեց բաձկոնի ծոցից մի կտոր սև հաց, յետոյ բացարեց՝ թաշկինակի ծայրին կապած աղը, ցանեց

հացի վրա և սկսեց ուտել: Նոյն րոպէին մօտեցաւ մի ինչ որ մարդ և զիմեց պահապանին.

— Ինչո՞ է դրուած անցարդելը... չէ՞ որ Հիմա գնացքի ժամանակ չէ...

— Այս րոպէիս կ'անցնի գինուորական գնացքը, — պատասխանեց պահապանը, — նոր ընարուած գինուորներ են տանում:

Խրիստինան ակամայ վեր բարձրացաւ տեղից. կարծես նրա դէմքի բոլոր կնճիռները միանգամից ցնցուեցին և աւելի ևս սաստկացան... Յանկարծ երևաց երկաթուղու սև ծխնելոյղը և օդի մէջ Հնչեց մի սուր շվիւոց: Գնացքը կարծես դճերի հետ միասին էր ընթանում՝ առանց շարժելու անիւները... Սև, փակուած վազոնների երկար շղթան սլանում էր առաջ, իբրև մի շարժուն, անանցանելի պարիսպ: Փոքրիկ լուսամուտներից երևում էին բազմաթիւ դէմքեր, խուզուած գլուխներ, լսում էր ուրախալից երգերի ձայներ, բայց այդ ուրախութեան մէջ նոյն խիստ նկատելի էին ախուր, սիրա մորմոքող Հնչիւններ...

Ամեն բան մի անգամից կարծես յանկարծ աղմուկուեց, թնդաց, դռուգուաց և սլացաւ առաջ:

Խրիստինայի սիրտը կարծես մէկը հուպ տուեց երկաթէ ունեիլքով: Նրա հոգին պաշարեց մի այնպիսի տխրութիւն, որ պատրաստ էր լաց լինելու: Նրան թւում էր, թէ սև վազոններից մէկից երևաց Փիլիպի դէմքը, այնպէս նիհար, ախուր... Բայց նա համոզուած էր, որ ինքը սխալուել է. նա Փիլիպը չէր. փաստաբանը ինքն ասաց, որ նրա որդին թաղ-

ցրած է քննիչներին... Ուրեմն նոր ղինուորները
գնացին, իսկ նա մնաց և էլ չի գնաց...

Եւ Խրիստինան Հանգիստ սրտով շարունակեց
ճանապարհը:

ՎԵՐՋԱՐԱՆ

Երեկոյան դէմ Խրիստինան արդէն տանն էր:
Նա բաժանեց մանուկներին պանդոկից գնած մի գրո-
շանոց խմորեղէնները և սկսեց ընթրիք պատրաս-
տել: Նա այժմ ուրախ էր և դո՛հ Աստուծուց, որ
ամեն բան վերջացած է. իւր Ֆիլիպը մնացել է և
ինքը շուտով կտեսնի նրան... Ճիշտ է, փողը բոլո-
րը գնաց և նա այժմ զգում է ծոցում, շապկի
վրայից դատարկ գուլպան, բայց դէ՛հ, դա՛ մի մեծ
դժբաղդութիւն չէ... Թէպէտ Անտօնը փոքր ինչ
կրարկանայ, բայց նա հօ՛ սուրբ դործ է կատարել
և ազատել է որդուն...

Իվանի հիւանդ կիներ թոյլ ձայնով արանջում
էր, որ մարդը այսքան ժամանակ ուշանում է:

Վերջինս իմացել էր, որ իւր հօրեղբայրը
գնացել է փաստաբանի մօտ՝ նրան իւր կողմը գրա-
ւելու: Ուստի և նա դեռ առաւօտուանից գնաց
պանդոկը, որ հարցութիւն անի այդ մասին զիւ-
ղացիներից և պանդոկապետից: Ժաշին նա տուն
դարձաւ փոքր ինչ հարբած և ամենախիստ խօս-
քերով սկսեց հայհոյել իւր քեռուն: Եթէ չեղի-
նէն իմանար, որ իւր ամուսինը կսկսէ այդպէս
ատել նրան և օղի խմել, երբէ՛ք չէր խորհուրդ

տայ այդ դործը բաց անելու, բայց այժմ արդէն
ուշ էր: Նրանք արդէն շատ փող էին փչացրել զրա
համար և թէպէտ այժմ էլ ստիպուած կլինեն
պարտք վերցնել, բայց, ինչ էլ լինի, անպատճառ
պէտք է խլեն այդ հողը Պաւելի ձեռքից:

— Հապա ո՛ւր է Իվանը, — հարցրեց Խրիստինան.

— Պանդոկում է. եկաւ ճաշեց և նորից գնաց...

Ասաց, որ կսպասէ հօրեղբօր վերադարձին:

— Իսկ վերադառնալուց յետոյ ի՞նչ պիտի լինի...

Օ, խեղճ իմ գլուխ, — հառաչեց չեղինէն. — Ես
գիտեմ... յայտնի բան է, հարբած մարդ է... վա-
խում եմ, որ մի փորձանք չեբրի գլխին...

Յետոյ նա խոստովանուեց Խրիստինային, որ
նչ միայն իւր օժիտն են ծախսել — պրծացրել Պա-
ւելի հետ սկսած գործի համար, այլ և իրենց հա-
ւաքած փողերը. այդ էլ չի բաւականացրել. հօրից
էլ ստիպուած են եղել պարտք վերցնել:

Չեղինէն խիստ վատ դրութեան մէջ էր. մի կող-
մից այդ փողերի վիճակն էր անհանգիստ անում
նրան, միւս կողմից էլ Իվանը: Վախենում էր, որ
վերջինս հարբած ու կատաղած մի փորձանք չե-
բրի իւր գլուխը. բայց Խրիստինան հանգստացրեց
նրան:

— Փաստաբանը շատ լաւ մարդ է, — ասաց նա,
— նա իրեն թոյլ չի տայ Պաւելի կողմը անցնելու:
Եթէ մի անգամ յանձն է առել մէկի դործը վա-
րելու, էլ նրա ախոյեանի դործը յանձն չի առնի...
Եթէ խոստացել է, կկատարէ իւր խօսքը: Նա ինչ
էլ է խոստացել... Իսկ Իվանը ի՞նչ է անելու որ

Պաւելին... նա քաղաքից իւր կնքահայր Պետրի
հետ է գալիս, դեռ լոյս է, պանդոկը լիքն է մարդ-
կանցով... ոչինչ չի լինի...

Հեղինէն էլ փոքր ինչ հանդստացաւ.

Խրիստինան խոստացաւ Հեղինէին գնալ պան-
դոկ և իմանալ ի՞նչ են անում Իվանն ու Պաւելը:
Նա արդէն պատրաստուում էր գնալու, երբ դուռը
բացուեց և ներս մտաւ Անտօնը, ուսին բարձած
մի չեռվերիկ սև ցորեն: Խրիստինան օգնեց նրան
տուրակը ցած դնելու և համբուրեց նրա արեւ-
կէզ ճակատը: Որդին փոխադարձաբար նոյնը արաւ:
— Զը, ի՞նչ նոր լուր, մայրիկ, ի՞նչպէս է Ֆի-
լիպը, առողջ է.

— Առողջ է, առողջ աղանեակս, — պատասխա-
նեց մայրը՝ ծիծաղելով և երեւան հանելով իւր մի
շարք դեռ սպիտակ առաջները: — Նոր զինուորները
արդէն գնացին, իսկ նա մնաց... Փաստաբանը —
Աստուած նրան բարի առողջութիւն տայ — թաք-
ցրեց նրան քննիչներից... և շուտով Ֆիլիպս Միլեփօ
կգայ ձմեռելու:

Դէ՛հ, փառք Աստուծոյ... իսկ ես կարծում էի,
որ նա գնացել է:

— Ինչե՞ր էիր այդպէս կարծում:

— Ահա՛ քեզ համար նրանից նամակ կայ: —
պատասխանեց Անտօնը, հանելով ծոցից կեղտոտուած
ծրարը. — այսօր առաւօտ, ձեր գնալուց յետոյ, քա-
ղաքից վերադարձաւ Յակովբ Շիլօն. նա տուեց ինձ
նամակը... «մօրդ վրա է» — ասաց. — Ֆիլիպիցն է...
շատ կարեւոր է...

Խրիստինան՝ տեղումը քարացածի պէս կանգ-
նած՝ շուռ-մուռ էր տալիս ձեռքի նամակը: Յե-
տոյ՝ նա սթափուեց, քաշեց Անտօնի փեշից և հե-
տը ուղեւորուեց Նիկիոլայի մօտ, որը ամբողջ զիւղի
համարեա միակ նամակ կարդացողն էր: Ազարակից
փոքր ինչ հեռու, նրանց ականջին հասան սաս-
տիկ աղմուկի ձայներ, որ դալիս էին պանդոկի
կողմից...

— Այդ ի՞նչ է պատահել այնտեղ, — խօսեց Ան-
տօնը:

Նրանց առաջ՝ ազարակը տանող ճանապար-
հը բռնած՝ դալիս էին մի խումբ մարդիկ: Մի քա-
նի ծանօթ բանուորներ ուժով թրև էին տա-
լիս մի մարդու, որը ընդդիմանում էր նրանց և
աղաղակներ բարձրացնում: Նա չէր ցանկանում
գնալ: Դա Իվանն էր. հարբած, դէմքը ամբողջովին
արիւնաշաղախ, տեղ-տեղ էլ կապտած հարուածնե-
րից, բաձկոնը ու շապիկը պատառոտուած... Նա ա-
մենակեղտոտ խօսքերով հայհոյում էր մէկին: Աչ-
քերը ուռած էին ու կարմրած, իսկ շրթունքները
պատած էր լերդացած արիւնով ու փրփուրով:
Նրան առնող բանուորները նոյնպէս աղաղակում
էին, բայց նա բոլորից շատ էր գոռում: Ո՞վ կ'ասէր,
որ այդ հարբածը այն համեստ, խաղաղ ու օրի-
նակելի Իվանն էր:

Հասնելով այդ խմբին՝ Անտօնը դիմեց բանու-
որներից մէկին.

— Ի՞նչ է պատահել.

— Է՛հ, յարձակուեց իւր հօրեղբայր Պաւելի

վրա և ծեծեց նրան, արիւնլուրիկ արեց. նա էլ սրան նոյնպէս... ստիպուած էինք ոստիկանութիւն կանչել...

— Այ քեզ բան, — ասաց Անտօնը՝ դարմացքից բերանը բաց արած: Ո՞ւմ մտքով կ'անցնէր, որ այդպիսի բարի մարդը կ'սմի ու կ'ծնծկուի... երեւում է, շատ է ցանկանում Պաւելի հօղը ձեռք բերել:

Խրիստիանան կանգ չառաւ. նա ուղիղ գնաց Նիկօլայի տուն. Անտօնը խրճթի շէմքին հասաւ նրան:

Նիկօլայը իմանալով նրանց դալու պատճառը, հանեց մի հին պատռուած ու իւղոտած աղօթագրքի միջեց իւր ականոյները, դրեց քթին և՛ նրստելով պատուհանի տակ՝ սկսեց կարգալ նամակը՝ համարեա դիր կապելով:

«Սիրելի մայրի՛կս, այս նամակը ուղարկում եմ քեզ Յակովք Շիլօի ձեռքով, որը ապրում է Միլիվոյում՝ Պաւելի տան մօտ: Եթէ, նամակս կարդալուց յետոյ, անմիջապէս չե՛ս գալ մօտս, էլ երբէք, չե՛ս տեսնի ինձ այս աշխարհում... Երեկ գնդապետից հրաման եկաւ, որ վաղը բոլոր նոր ղընուորները գնան իրենց նշանակած տեղերը: Բոլորը միասին չեն գնում, այլ վաշտ-վաշտ... Ամենից առաջ այն վաշտն է գնալու, ուր ես եմ ծառայում... Ուրեմն վաղը, մայրի՛կս, ես ուղևորւում եմ դէպի հեռաւոր երկրներ...»

Մի խուլ հառաչանք դուրս թռաւ Խրիստիանայի կրծքից... Անտօնը բրդեց նրան արմուկով և հանդարտ ասաց.

— Կամայ, մայրի՛կ, մի խանգարի՛ր, թող կարգայ:

«Ընկերներս ինձ համոզում են, որ չտխրեմ, որովհետեւ գնացողը մենակ ես չեմ և գուցէ մի ժամանակ վերադառնամ էլ... բայց ես չեմ կարող չտխրել, քանի որ ինձ թոյլ ու հիւանդ եմ զգում... Մի ամբողջ ամիս հիւանդանոցում պառկելով՝ փոքր ինչ առողջացել էի, բայց այժմ վիշտն ու տխրութիւնը ինձ աւելի են վատթարացրել: Կուրծքս և բոլոր ոսկրներս ցաւում են... Եթէ կամենում ես մի անգամ էլ տեսնել ինձ այս աշխարհում, շուտով արի՛... Թոյլ տուր, որ ես էլ վերջին անգամ տեսնեմ քեզ... Սիրելի մայրի՛կս, խնդրում եմ ինձ խոստացած փողեց էլ մի հինգ ուրբի բերես հետդ: Դո՛նէ մի-մի ժամանակ հնարաւորութիւն կ'ունենամ ինձ համար ծխախոտ գնել և կօշիկ կարել տալ: Ինքս, ինչպէս զիտես, չեմ կարող կարել, իսկ ձրի ոչ ոք չի կարի... Դէ՛հ, ուրեմն արի՛ և բե՛ր հետդ փողը, որովհետեւ վաղը գնում եմ: Իսկ առայժմ բարեկիր Անտօնին, Իվանին և նրա կնոջը, Պաւելին, Նիկօլային, Յակովք Շիլօին և Գնացածներին...»

Նիկօլայը վերջացրեց ընթերցանութիւնը և նամակը բռնած ձեռքը վայր թողեց ծնկան վրա: Այդ բոպէին լսուեց մի սարսափելի աղաղակ և Խրիստիանան հնձած հասկի նման գլորուեց գետին: Նա երկու ձեռքով ամուր բռնել էր գլուխը ու վշտալի հառաչանքներ էր արձակում:

Ո՛հ, Աստուած, Աստուած...

Սյդ բացականչութիւնները այն աստիճան ցա-
ւաղին էին և սիրտ մորմոքող, որ մարդ կարծում էր,
թէ նա իսկոյն կմեռնի:

Սյդ բուռն էին նա ցնորուածի տպաւորութիւն
էր զործում: աչքերի վայրի հայեացքը շարունակ
թափառում էր այս ու այն կողմ, մաղերը թափ-
ուել էին դէմքի վրա և կրծքի կոճակները բացուել:
Սյժմ նա բոլորը հասկացաւ... հասկացաւ և այն,
որ փաստաբանը խաբեց իրեն, փողերը առաւ ձեռ-
քից, որդուն չաղատեց և նրան ուղարկեցին այն
երկրները, որոնց նիկոլայը այնպիսի սարսափելի
զոյներով էր նկարագրում:

— Օ, Աստուած իմ, Աստուած,— կրկնում էր նա:

Յիրաւի, նրա որդին ճանապարհ ընկաւ այն
ժամանակ, երբ ինքը քաղաքում էր և նրան չթո-
ղեցին, որ մի վերջին անգամ էլ տեսնի իւր Ֆի-
լիպին: Որդուն տարան այն դնացքով, որը այն-
պէս արագ սլացաւ իւր առաջից անցարգելի մո-
տով: Նա ախր տեսաւ Ֆիլիպի դէմքը, բայց կար-
ծեց, թէ աչքին երեւաց...

— Օ, Աստուած իմ, Աստուած...

Նա զրեւ է. «մայրիկ, արի», և ինքը չգնաց
հրաժեշտ տալու, չգնաց օրհնելու նրա հեռաւոր
ճանապարհը իւր մայրական ձեռքով... Մի քայլ էր
միայն հեռու, բայց չկարողացաւ ոչ զրկել և ոչ համ-
բուրել իւր թանկագին զաւակին:

— Ո՛հ, Աստուած... այդ ի՞նչ արեցի ես...

Դէ՛հ, հերիք է մայրիկ, հերիք է,— հանգըս-
տացնում էր Անտօնը՝ կռացած մօր առաջ:

Նրա աչքերն էլ լցուել էին արտասուքով. նա
նոյնպէս խղճում էր եղբօրը, բայց աւելի ևս մօրն
էր խղճում, այդ պատճառով և իւր կարողացածի
չափ մխիթարում էր նրան.

— Դէ՛հ, սո՛ւս, մայրիկ, սո՛ւս, հերիք է... բա-
ւական է...

Բայց Խրիստինան աւելի ևս բարձրացրեց ձայ-
նը. նրա միտքն ընկաւ մի սարսափելի բան... Նա
վերկացաւ տեղից, չօքեց, բարձրացրեց ձեռքերը և,
արտասուքն աչքերին, սկսեց աղաղակել:

— Հիմա ի՞նչ ուղարկեմ նրան թշուառ, երբ
բոլոր փողերը տուեցի փաստաբանին... Որտեղեց
գտնեմ ես այդ հինգ ուսուցիչն, քանի որ մի կուպէկ
էլ չունեմ զրպանումս... մի սև կուպէկ էլ: Ո՛հ, Աս-
տուած, այդ ի՞նչ արեցի... գետինը պէտք է պատ-
ուէր, ինձ ներս տանէր, օտքերս պէտք է կոտրուէին,
որ ես չգնայի քաղաք և չտայի փողերը...

Ա՛խ իմ Ֆիլիպս, իմ ծաղիկս, իմ աչքիս լոյսը,
էլ ի՞նչ կ'ուղարկեմ քեզ:

Եւ Խրիստինան սկսեց բարձրաձայն հեկեկալ...
Անտօնը նոյնպէս լալիս էր՝ կռացած մօր առաջ, և
շարունակում էր մխիթարել:

— Բաւական է, մայրիկ, լա՛ւ, բաւական է. հե-
րիք է չարչարուես... վերցրո՛ւ իմ փողեց հինգ ուսու-
չի և ուղարկի՛ր նրան... ես նրանից չեմ խնայի...
լսո՛ւմ ես, ինչ եմ ասումս...

Օ, այդ նա լաւ էր լսում, և հէնց զրա հա-
մար էր այդքան տանջւում ու արտասուք թա-
փում:

Խորիստինան բարձրացրեց. դէպի նա իւր արտասուելից աչքերը և խուլ ձայնով արտասանեց.

— Ո՛հ, որդեակս... ների՛ր ինձ՝ թշուառիս... չէ՞ որ ես քո փողերն էլ տուեցի... ո՛հ, ների՛ր ինձ, ների՛ր...

Անտօնը բարձրացաւ տեղից, ուղղուեց. աչքերի արտասուքները մի վայրկեանում ցամքեցին, դէմքը կարմրեց.

— Տուեցի՛ր... ե՞րբ. — գոչեց նա.

— Այս առաւօտ... քաղաքում... փաստաբանին...

Տիրեց խուլ լռութեան ըոպէն. Անտօնի դէմքին երևեցան բարկութեան նշաններ, աչքերը բոցավառուեցին. նա յետ-յետ քաշուեց մօրից, սեղմեց բռունցքները և մի այնպիսի ձայնով գոռաց նրա վրա, որը Խորիստինան երբէք չէր լսել:

Ա՛ա, — բացականչեց նա, — որ այդպէս է, էլ դո՛ւ իմ մայրս չե՛ս. ես այդ բանը երբէք չեմ մոռանայ...

Եւ նա՝ նստելով պատի տակը՝ ձեռքերը դրեց ծնոտին ու սկսեց բարձրաձայն հեկեկալ.

— Բոլորը նրան, բոլորը նրան, իսկ ինձ — ոչինչ... կարծես ես իրա զաւակը չլինեմ... ինչով է նա ինձնից լաւ... թէ՞ ես նրա պէս հնազանդ չեմ եղել... նրանից պակաս եմ ես յարգել քեզ...

Այդպիսի ծանր նախատինքներ ուղղելով մօրը, նա դարձաւ Նիկօլային և սկսեց նրան պատմել, որ մի միլեվացի զիւղացի կամենում էր տալ նրան իւր միակ Մարիաննա աղջիկը, մի երիտա-

սարգ, գեղեցիկ, բարի և անտես օրիորդ... Մի տալուց հարսանիքը կլինէր և նա կ'ուեննար իւր տուն-տեղը...

— Իսկ այժմ ո՞վ կվերցնի ինձ անփող. և ո՞վ կգայ ինձ... Եւ ի՞նչպէս եմ ես խնդրել, որ չտայ: Չէ՛, տուել է... Մի ասա՛, ինչո՞ւ համար դու իմ բաղդիս առաջը քար ձգեցիր... ի՞նչ վատութիւն եմ արել քեզ... ինչով եմ ես Ֆիլիպից վատ...

Եւ նա նորից սկսեց լալ.

Խորիստինան չօքէչօք մօտեցաւ Անտօնի նըստած թախտին:

Նրա սիրտը միջից կէս էր լինում. մի կէսը սլանում էր զնացածի ետեից, միւսը խղճում նրան, որին ինքն էր իւր ձեռքով զրկել: Մօտենալով Անտօնին՝ նա կամենում էր զրկել, բայց որդին, զգալով մօր հպաւորութիւնը, վեր թռաւ թախտից:

Չնայելով դրան, Խորիստինան նորից չօքէչօք մօտեցաւ նրան և, ձեռքերը պարզած, սկսեց աղաչել.

Ների՛ր ինձ անդգամիս, մի՛ բարկանար վրաս, զաւակս... չէ՞ որ դու այժմ միակն ես մնացել... էլ ո՞վ կմխիթարէ ինձ, կթեթեացնէ վիշտս...

Բայց Անտօնը անողորելի էր և գուցէ նա կրկին յետ մղէր մօրը, եթէ Նիկօլայը չվերկենար թախտից և վզակոթից բռնած՝ դուրս չվռնդէր նրան:

Խորիստինայի փողերը, ի հարկէ, զուր տեղը կորան, ինչպէս և կորան միլեվացի զիւղացիների փողերը: Կորան նոյնպէս Իվանի և Պաւել Գող-

գավայի տուածները: Բոլորը, ինչ որ կարելի էր
առնել այդ գիւղացիներից, կապրովսիին առաւ,
ինչպէս և առաւ ուրիշ շատ սեղերից... Մի խօս-
քով՝ խեղճ Ժողովրդի արիւն-քրտինքով աշխատած
կոպէիները մասն ուրիշն աշխատանքը հարստա-
հարողի զբոսնը:

Այդ բոլորը դեռ ոչինչ էր, եթէ բանը դրանով վերջանար, բայց դժբաղդաբար այդ աշխատանքի կոպէկների հետ կորաւ և միաբանութիւնը զիւղացիների մէջ: Հողատէրերը յանդիմանում էին մէկ-մէկու, որ թոյլ տուեցին այդպէս անազնիւ կերպով խաբելու իրենց Կապրովմիւս և Նիկոլայի նման զանազան խորամանկ անձնաւորութիւններին:

Բայց մի՞թե քիչ են այդպիսի Կապրովսկիներ և Նիկոլայներ մեր երկրում...

Ի վանը թէև ազատուեց դատաստանից իւր
հօրեղբօրը ծեծելու համար, բայց այնուհետեւ եր-
բէք չկարողացաւ զրաւել Պաւելի համակրութիւ-
նը, ևս առաւել նրա ընկերութիւնը: Պաւելը նրա
համար օտարից էլ վառ դարձաւ:

Անասնը թողեց մօրը և բանուոր վարձուեց
ուրիշ կալուածքում: Թշուառ Խրիստինան, ծե-
քութեան հասակում քնաց մէն-մէնակ:


Իսկ ի՞նչ վիճակուեց նրան, որը այդ բոլորի
սկզբնապատճառն էր դարձել.—կհարցնէ ընթերցողը:
Ոչե՛նչ.

Միլենվոյի գիւղացիները կամենում էին դատի
կանչել նրան, բայց երբ պահանջեցին զրաւոր ապա-
ցոյցներ, նրանք ոչինչ չկարողացան տալ:

Կապրովսկին հեռացաւ այդ քաղաքից, որպէս
զի մի ուրիշ տեղ սկսի նոր խաբեբայութիւններ,
նա այնպէս զնայ, որ ոչ ոք չ'իմացաւ և երբ սկսե-
ցին փնտրել, նա արդէն չքացել էր:

Շուտով, նրա փախուստից յետոյ, Նիկօլային զտան անտառում սպանուած. նրա դիակից երեւում էր, որ վրէժ հանողները, յիրաւի՝ շատ խիստ կերպով էին վրէժխնդիր եղել—նա ամբողջովին վերաւորուած և այլանդակուած էր... Դատաստանական հետախուզութիւնները ոչ մի հետեանք չ'ունեցան, ամբողջ զիւզը լռում էր. միայն նկատելի էր, որ զիւզացիներից ամեն մէկը արժանի էր համարում նրան այդ վարձատրութեան և ափսոսում, որ նրա կողքին չձգուեց և փաստաբան Կապրովսկու գիակը:





ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԺԻՎՕՏՕՎՍԿԻ.—Տաբուլիւն և օդ. պատկերներով 1895 թ. գինն է **12** Կ.
ԷԼԻՋԱ ՕՐԺԵՇԿՕ.—Գիւղական փաստաբանը. 1896 թ. գինն է . . . **20** Կ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

ԲԵՐՆԵՏԷՅՆ.—Ծաղիկ և պտուղ.
Է. ՕՐԺԵՇԿՕ.—Կախարդը.

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Սպարտակ.
Անձրե և ձիւն.

ԴԻԷԼ՝ *С.-Петербургъ, Миліонная улица, домъ № 29 кв. 19.*

І. Мьѣникіанъ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0327543

46.223